ԶԵԿՈՒՅՑ

1700-ամյակի Երիտասարդական Ուխտագնացության
Գրասենյակի

/1-6 Հունվարի 2001 – 1-6 Օգոստոս 2001/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
Հովնան Արք. Տերտերյանի խոսքը	3
Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակի պատասխանատու Արեգ Թադեւոսյանի խոսքը	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
Ա. Գրասենյակի ժողովական կյանքը	11
Բ. Կամավորների ներգրավման և նրանց նախապատրաստման աշխատանքային ուղղություն	22
Բ.ա. Հոգևոր կրթանքի խումբ	24
Բ.բ. Դպրոց	25
Բ.գ. Ընկերային ծառայություններ	30
Բ.դ. Պեղումներ	33
Բ.ե. Տաճարաշինական ջոկատ	36
Բ.զ. Ուխտագնացությունների և հայ ավանդական տոների նշումը կազմակերպող խումբ	38
Բ.է. Միջխմբային առնչություններ	43
Գ. Ներքին թեմերի հետ աշխատող խումբ	44
Դ. Արտաքին թեմերի հետ աշխատող խումբ	46
Ե. «Ծրագրային» աշխատանքային խումբ	47
Զ. Լրատվական ծառայություն	49
Է. Համահայկական Երիտասարդական Առաջին Ուխտագնացություն	51
Ը. Ուխտագնաց-Երիտասարդների Համահայկական առաջին Ֆորում	56
ՎԵՐՋԱԲԱՆ	57
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	65

Առաջին մի քանի տարում մենք մեզ նախապատրաստում էինք այս ուխտագնացությանը՝ հավատալով, որ այս հոգևոր ճանապարհորդությունը հնարավորություն պիտի ստեղծի երկնային հորը հանդիպելու և զգալու նրա մշտական ներկայությունը:

Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսին այս երիտասարդական ուխտագնացությանն իր օրհնությունը տալու համար: 1700-ամյակի տոնակատարությունը առաջնորդեց մեզ դեպի նոր առաքելություն մեր կյանքում: Երիտասարդ կենսունակ մեր անդամների ջանքերով մենք կկարողանանք վերածնվել հոգեպես՝ որպես անհատներ և ամբողջապես՝ որպես եկեղեցի:

Հուսադրող է տեսնել Հայ Առաքելական եկեղեցու նորոգվող կերպարը: Երիտասարդության ներկայությունը եկեղեցում ոգեշնչման աղբյուր է, որ յուրաքանչյուրիս առաջ նոր հորիզոններ պիտի բացի:

Այս սուրբ հողից կյանքի կոչվելու: Մենք եկել ենք այստեղ մտնելու հաղորդության մեջ մեր Հայր Սուրբ Գրիգորի և նրա խորհրդավոր կանթեղի հետ: Մի հնարավորություն՝ տրված մեզ, վերանորոգելու մեր հավատը ի Քրիստոս և Քրիստոսակենտրոն կյանքով ծգտել կատարելության Աստծով:

Կյանքը հայելի է, որի միջով արտացոլված է Աստծո ներկայությունը: Մենք կարող ենք տեսնել Աստծուն հոգևոր աչքերով այնքան ժամանակ, որքան մենք պահում ենք նրա խոսքը և պատվիրանները: Հոգևոր կյանքը կունենա իր իմաստը միայն այն ժամանակ, երբ Աստծու խոսքերը գործի կվերածվեն՝ Քրիստոսի եկեղեցին հզորացնելու համար: Այս ուխտագնացությունը մեզ կուղղի դեպի կյանքի նոր ճանապարհ, նվիրվածություն և զոհաբերություն քրիստոնեական հրաշափառ կյանքին: Սրա մենալավ օրինակը դա մեր ազգի փրկությունն էր 20-րդ դարի սկզբին կատարված ցեղասպանությունից:

Երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսը ասում էր. «Հյուր լինելով Աստծուն փնտրելու ճանապարհին՝ մենք պետք է ընդունենք այն ճշմարտությունը, որ պետք է ապրենք Աստծո հետ. ճշմարտությունն է ամենամեծ ժառանգությունը: Հայ Առաքելական Եկեղեցին կամուրջ է, որը մոտեցնում է Աստծուն մարդու հետ և մարդկանց միմյանց»:

Սիրելի հայ երիտասարդնե՛ր, դուք բոլորդ եկել եք աշխարհի տարբեր մասերից միավորված մեկ Առաքելական նպատակով՝ ներդնելու առավելագույնը

եկեղեցու հզորացման գործում: Հուսով ենք, որ առաջին քայլը ամուր ադմինիստրատիվ հիմք ունենալով կարող է շարունակելիություն ապահովել: Այս ուխտագնացությունը կդառնա նոր նպատակների եւ երազանքների իրականացման դրդող ուժ:

Մենք պետք է շարունակենք ծառայել կայուն հավատքով, սիրով և հույսով սկսելու երիտասարդական շարժումներ գյուղերում, քաղաքներում և թեմերում: Եվս մեկ անգամ Սուրբ Էջմիածինը կհռչակվի մեր նախահայրերի քրիստոնեական հավատքի կենտրոն:

Սիրելի երիտասարդնե՛ր,

Շնորհակալություն եւ փառք մեր Տիրոջը, որ օրհնել է մեզ եւ այս ուխտագնացությունը: Մենք խիստ բարձր ենք գնահատում բոլոր նրանց, ովքեր հնարավոր դարձրեցին հավատքի այս ամրոցի ստեղծումը:

Թող այս ուխտագնացությունը վերանորոգի մեր հավատքի ուխտը բոլորիս սրտերում:

Հովնան Արք. Տերտերյան
1700-ամյակի տոնակատարությունների
գրասենյակի վարիչ-քարտուղար

Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակի պատասխանատու Արեգ Թադեւոսյանի խոսքը

Սիրելի Բարեկամնե՛ր,

2001 թ. հուլիս ամսին տեղի ունեցավ մի երեւույթ, որը ամենայն հավանականությամբ նշանավորելու է մեր ժողովրդի պատմության նոր էջի բացումը:

Նախորդ էջը բավականին տխուր տեսք ուներ: Չնայած կարմիր կտորներով եւ բարձրագոռգոռ ճառերով զարդարված լինելուն, այն իր խորքում թաքցնում էր մի ամբողջ հսկա երկրի մարդկանց՝ իրենց հոգեւոր արմատներից կտրված, իրենց էությունը եւ Աստծուն մոռացած "նոր սերնդի" աճեցման փորձ, որը պետք է իր ուսերին քարշ տար արնակարմիր ներկված երկիրը դեպի "պայծառ ապագա"... Իհարկե դա միայն այսպես կոչված "խորհրդային կայսրության" երազանքը չէր եւ մեր Արեւմտյան բարեկամները նույնպես դեմ չէին լինի... սակայն այնտեղ այդ ամենը ավելի նուրբ եւ "դեմոկրատորեն" էր արվում: Եվ այսօրվա օրը ցույց է տալիս, որ հարեւանների մեթոդները ավելի արդյունավետ էին:

Ինչեւէ, փակենք այդ էջը. "հետտոտալիտար շոկից" նոր դուրս եկած երիտասարդությունը բավականին եւ միգուցե չափազանց մեծ (եւ ծանր) ժառանգություն ստացավ: Ակտիվում անկախ եւ ազատ Հայաստան, ազատագրված Արցախ, եւ "ինքնորոշվելու իրավունք", պասսիվում՝ քայքայված տնտեսություն, երկիրը լքած հսկա ներուժ եւ կտրտված հոգեւոր արմատներ: Եւ լիակատար անգրագիտություն՝ այդ ամենի հետ որեւէ խելքը գլխին բան անելու գոնե տարրական ունակությունների դաշտում:

Այս ֆոնի վրա մեր "նախորդ էջի բնակչի" համար Կորյունի 19 Ա հասցեով 2000թ. նոյեմբեր ամսից ցայսօր տեղի ունեցող երեւույթը պետք է որ առնվազն անսովոր եւ նույնիսկ մինչեւ անգամ անբացատրելի լիներ:

Չորս ամսվա ընթացքում առանց "գրագետ" գովազդային արշավի, առանց նյութական բարիքների (բիզնես սեկտորի Աջակցություն) եւ իշխանության հասնելու (կուսակցական սեկտորի Աջակցություն) խոստումների, բացառապես հոգեւոր առանցքի շուրջ հավաքվեցին շուրջ 2000 Հայաստանի երիտասարդներ Հայաստանում եւ մոտ այդքան էլ սփյուռքում:

Սակայն, բնականաբար. միայն "մեր նախորդ էջի բնակչի" համար է այդ երեւույթի պատճառն անհասկանալի, եւ առանց ծանրանալու այն հսկա ծավալի աշխատանքների վրա, որ այս երիտասարդները արեցին (ինչին նվիրված է այս զեկույցի մնացած մասը), կուզենայի մեկ - երկու խոսքով այնուամենայնիվ բացատրել, թե Ինչպե՞ս եւ Ինչու՞ սա տեղի ունեցավ եւ Ի՞նչ նշանակություն սա կունենա.

Ինչպե՞ս եւ Ինչու՞

- Առերեւույթ համատարած եւ վերջնական բնույթ կրող հոգեւոր արմատների "կտրտման" գործընթացը մատնվել էր (եւ դատապարտված էր մատնվելու) լիակատար անհաջողության: Հայ երիտասարդի սրտից Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջով առ Աստված եւ Հայոց հողի փիրտը տանող արմատը այդպիսի չանգռտոցների չէ, որ դիմացել էր:
- Իր կողքին Հայ հոգեւորականին տեսնելը, նրա հետ աշխատելը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ժառանգության նույնիսկ փոքրիկ մասնիկների հետ կապի մեջ մտնելը բավական դարձավ հզոր համահայկական երիտասարդական շարժման սկիզբը դնելու համար: Եւ դա համայն Հայ երիտասարդության՝ առ Աստված Ուխտագնացության միայն սկիզբն էր...
- Հոգեւոր Առանցքի շուրջ համախմբվելով եւ ինքնուրույնաբար ընտրելով աշխատանքի դաշտը՝ երիտասարդները տեսան, որ իրենք Կարող են եւ սկսում են հասկանալ որ Պարտավոր են: Շատ կարճ ժամկետում իրենցից դուրս կատարած փոփոխություններին զուգընթաց նրանք զգացին իրենց մեջ տեղի ունեցող Փոփոխությունը եւ տեսան իրենց մեջ "Զարթնողին":

Ի՞նչ նշանակություն կունենա սա

- Գրասենյակի բոլոր կամավորների եւ նրանց հետ աշխատող հոգեւորականների եւ մտավորականների համար պարզ է, որ ծնված Կենտրոնը նախասկիզբը եւ բյուրեղացման կենտրոնն է հանդիսանալու Եկեղեցու եւ երիտասարդության **Իրական Հանդիպման**, որի լույսը

արդեն սկսել է ճառագել ավելի ու ավելի հեռուն: Այս հանդիպումը արդեն վաղուց էր սպասվում եւ երիտասարդությունը հաստատակամ է չկորցնելու եւ զորացնելու այդ զգացումը եւ ապրումը:

- ՍԱ ՄԻԱՅՆ ՍԿԻԶԲՆ Է...

Արեգ Թադեւոսյան
Երիտասրդական Ուխտագնցության
Գրասենյակի պատասխանատու

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգի համար ճակատագրական պահերին, մեծ վերափոխումների ժամանակ վճռականը միշտ էլ եղել և մնում է երիտասարդության կողմնորոշումը: Այսօր ուրախալի է տեսնել, որ երկար դարերի ապարդյուն ճիգերից հետո, վերջապես ստեղծվել է մի եզակի պահ, երբ մեր ժողովուրդն ունի պետականություն, սեփական հող՝ ոտքերի տակ, ուսյալ, գիտակից երիտասարդություն: Եթե նախկինում հատուկենտ երիտասարդներ ունեինք, որ գրագետ էին կամ արտասահմանյան համալսարաններում ուսում առնելուց հետո պետք է վերադառնային կամ չվերադառնային օտարների ազատասիրական, հոգևոր գաղափարները իրենց ժողովրդի վրա պատվաստելու համար, ապա հիմա ունենք այն երջանիկ պատեհությունը, որ մեր նորանկախ Հանրապետությունում կա երիտասարդական մի կորիզ, որը մտահոգ ու շահագրգիռ է իր երկրի, իր ազգի հոգևոր զարթոնքի խնդրով, որ գիտակցում է աշխարհի բազում կրոնների մեջ իր կրոնի առավելությունը, նախանձախնդիր է նրա ամրապնդման ու նոր հաղթանակների համար:

Դեռևս 1999 թվականին Քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների նախապատրաստման առիթով առաջ եկած Մեծ Ուխտագնացության գաղափարը միանգամայն բնականոն ձևով արձագանք գտավ երիտասարդների մի խմբի կողմից, որն անմիջապես իր վրա վերցրեց Ուխտագնացության երիտասարդական աշխատանքների կազմակերպման պարտավորությունը:

Կարևորն այն է, որ այս պահին, առավել, քան երբևէ, ի հայտ եկավ հայ երիտասարդության հոգևոր գիտելիքների ծարավը, ու նաև այն հանգամանքը, որ կոմունիստական աթեիստական ռեժիմին չի հաջողվել արմատախիլ անել մեր մեջ գտնվող Քրիստոսին: Գուցե Նա Ի՞նքը չհեռացավ մեզնից, որպեսզի մենք մնանք Նրա պաշտպանյալներն ու սիրելիները այս համատարած պղծության և չարիքների միջավայրում:

Ծրագիրը, որ 1700-ամյակի տոնակատարութունների շրջանակում միակ բուն երիտասարդականն էր, անվանվեց **«Երիտասարդության վերազարթոնք»**:

Ծրագրի հիմնական երեք խնդիրներն էին.

1. Երիտասարդության գիտակից և կազմակերպված մասնակցություն Ուխտագնացությանը:
2. Աշխարհի հայ երիտասարդության մեջ Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանելու գիտակցության արթնացում:
3. Հայաստանում և աշխարհի ամենատարբեր անկյուններում ապրող հայ երիտասարդների միջև ընդհանուր եզրերի հայտնաբերում՝ հետագա շփումների եւ համագործակցության խորացման ակնկալիքով:

Ծրագիրը լավագույնս ի կատար ածելու նպատակով նախապատրաստական փուլում մանրակրկիտ և տքնաջան աշխատանք կատարեցին Գրասենյակի ղեկավարությունն ու հետզհետե բազմացող կամավորական խմբերը: Այստեղ բացահայտվեցին Հայաստանի և Արցախի երիտասարդության՝ հայրենիքին, ազգին օգտակար լինելու ձգտումը, պատրաստակամությունը, հնարավորությունները:

2000 թվականի սեպտեմբերի 30-ին 13 հոգուց բաղկացած մի խումբ կազմակերպեց Գրասենյակի ԱՌԱՋԻՆ Ուխտագնացությունը Խոր Վիրապից մինչև Էջմիածին, խնդրելով Աստծուն՝ շտկել իրենց քայլերը այս երկար ճանապարհին, որին իրենք ոտք էին դրել:

2001 թվականի հունվարի սկզբին հիմնվեց մի կենտրոն, որ անվանվեց 1700-ամյակի Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակ: Նախնական գաղափարը ստացավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը, հաստատվեց և խրախուսվեց Հովնան Արք. Տերտերյանի կողմից, ում շուրջը շատ կարճ ժամանակամիջոցում համախմբվեցին այլևայլ մասնագիտությունների տիրապետող, հանրապետության տարբեր բարձրագույն հաստատություններում ուսում ստացող բազում երիտասարդներ: Թեև Գրասենյակի գոյության և գործունեության վերաբերյալ ոչ մի հատուկ հայտարարություն չի արվել, բերանացի ինֆորմացիան երիտասարդության և ուսանողության շրջանակներում արագ տարածում գտավ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆՊԱՏԱԿՆ Է

Հայաստանի և Սփյուռքի երիտասարդներին համախմբել Հայ Առաքելական Եկեղեցուն և Հայրենիքին ծառայելու ուխտի շուրջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

- Բոլոր կարելի և օգտակար միջոցներով նպաստել ազգի արժեքային համակարգի մշակմանն ու արմատավորմանը.
- Աջակցել եկեղեցի-երիտասարդություն, հայրենիք-սփյուռք, երիտասարդ-մեծահասակ կապերի ամրապնդմանը. հայության հոգևոր, մտավոր, մշակութային, տնտեսական, գիտատեխնիկական ներուժը ծառայեցնել Հայաստանի զարգացման գործին.
- Աշխարհի հայ երիտասարդության հոգևոր, ինտելեկտուալ և ֆիզիկական զարգացման համար պայմաններ ստեղծել և աջակցել անհատական, ստեղծագործական ընդունակությունների բացահայտմանն ու կենսագործմանը:

Ա. Գրասենյակի ժողովական կյանքը

Գրասենյակային որոշումները մշակելու, դրանք թեմական ներկայացուցիչներին ներկայացնելու, հրավիրված մասնագետների եւ պաշտոնատար անձանց հետ քննարկելու նպատակով բոլոր հիմնական խնդիրները դիտարկվել են գրասենյակում եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում գումարված մի շարք ժողովներում: Բոլոր ժողովները սկսվել և ավարտվել են աղոթքներով՝ առ Աստված: Հոգևոր դասի փորձը և իմաստությունը երիտասարդներին փոխանցելու համար ժողովների ընթացքում հոգևորականների ներկայությունը երիտասարդների կողքին նախապայման է հանդիսացել :

Ծավալվել են միջթեմական, վարչության ժողովներ, գումարվել են երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաքներ, աշխատակազմի ժողովներ:

Միջթեմական ժողովների ժամանակ գրասենյակի պատասխանատու Արեգ Թադևոսյանը պարբերաբար զեկուցել է գրասենյակում տարվող աշխատանքների մասին, ներկայացրել ծեռքբերումները եւ առկա խնդիրները: Բոլոր զեկույցները, հաշվետվությունները առանձին փաթեթներով բաժանվել են ժողովականներին՝ ապահովելու համար ծավալված եւ արդեն իսկ կատարված աշխատանքների շարունակելությունը:

Առավել հաճախ են գումարվել վարչության նիստերը, որոնց հիմնական նպատակը եղել է տեխնիկական եւ ծրագրային խնդիրների լուծումը : Վարչության կազմում Գևորգյան ճեմարանի և Հայորդաց տների ներկայացուցիչների ներգրավված լինելը ապահովում էր ճեմարանականների և Հայորդաց տների սաների ընդգրկվածությունը Գրասենյակի աշխատանքներում:

Ծրագրում հասարակության առավել լայն շրջանակներ ներգրավելու նպատակով գումարվել են երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաքներ, որոնց ընթացքում քննարկվել է ծրագրի իրականացման ընթացքը: Կազմակերպություններին հնարավորություն է տրվել ընտրելու իրենց մասնակցության ոլորտները եւ աջակցության ձևերը:

Գրասենյակի աշխատակազմի ժողովները գումարվել են ամեն շաբաթ: Ժողովները վերահսկել են վարչության որոշումների իրագործման ընթացքը, գրասենյակի բոլոր ծրագրերը, տեղեկատվության մշակումը, տարածումը:

❖ **Մայիսի 9, 2000 թ.**
1700-ամյակի ուխտագնացության երիտասարդական հանձնախմբի առաջին ժողով

Երիտասարդական հանձնախմբի առաջին ժողովը հանդիսացավ այն ելակետը, որ նախանշեց Ուխտագնացության նպատակը, բնույթը և հետագա աշխատանքների ընթացքը: Մասնավորապես որոշվեց, որ ծրագիրը չի սահմանափակվելու մեկ Ուխտագնացությամբ, այլ կազմակերպչական աշխատանքների սկզբից եւեթ պետք է ապահովվի շարունակականությունն ու մնայուն կառույցի հիմնադրումը: Ուշադրության կենտրոնում պետք է լինեն չորս հիմնական նպատակներ՝

ա. **«Հոգևոր Արթնություն»**- երիտասարդության կյանքը կանոնավորելու միտումով հոգևոր առանցքի ձևավորում, առանձնակի շեշտադրում՝ տեղի բնակչության հետ տարվող աշխատանքների վրա
բ. **«Ծանոթացում սրբակենցաղ վարքին և ապրելածևին»**- ծանոթացում մեր ազգի հոգևոր ժառանգությանը,
գ. **«Կապերի ստեղծում»**- Սփյուռքի և Հայաստանի երիտասարդների միջև համագործակցության ցանցի, մնայուն կամուրջի ստեղծում,
դ. **«Սրբատեղիների և սրբությունների նկատմամբ հոգատար վերաբերմունք»**:

❖ **Սեպտեմբերի 11, 2000 թ.**
Հասարակական և ուսանողական երիտասարդական կառույցների առաջնորդների հավաք

Հավաքը աղոթքով սկսեց Քրիստոնեությունը Հայաստանում Պետական Կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի վարիչ-քարտուղար Հովնան Արք. Տերտերյանը: Այն կոչված էր կազմակերպություններում ընդգրկված երիտասարդներին ծանոթացնելու Համահայկական Երիտասարդական Ուխտագնացության ծրագրի հետ, քննարկելու ծրագրում նրանց ներգրավման ձևերը: Հավաքի ընթացքում քննարկվեցին ծրագրի լուսաբանման, ինտերնետային էջի ստեղծման հարցերը:

❖ **Հոկտեմբերի 25, 2000 թ.**

Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Վարչության այս նիստը հիմնականում անդրադարձավ հուլիս ամսին կայանալիք Համահայկական երիտասարդական ուխտագնացության ծրագրին: Այս նիստը նվիրված էր ապագա ուխտագնացների տեղավորման խնդրին , Խոր Վիրապի տարածքում նախատեսված գեղարվեստական ծրագիրն իրականացնելու հնարավոր տարբերակների ճշտմանը, առաջիկա միջթեմական ժողովի օրակարգի կազմմանը: Որոշվեցին հետագա մեկ ամսվա ժողովական կյանքի կազմակերպման խնդիրները:

- **Հոկտեմբերի 28, 2000 թ.**
  Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Գրասենյակի Սևան եւ Խոր Վիրապ մեկնած աշխատակիցները ներկայացրին մանրամասն զեկույցներ այդ վայրերի մասին, ինչպես նաև անդրադարձան տեղերում տարվելիք նախապատրաստական աշխատանքներին: Ժողովականներին ներկայացվեցին Խոր Վիրապում և էջմիածնում կայանալիք գեղարվեստական ծրագրերը: Որոշվեց ծրագրի նախնական մշակված տարբերակի անգլերեն և ռուսերեն թարգմանություններն ուղարկել ներքին և արտաքին թեմեր՝ ծանոթացման համար:

- **Նոյեմբերի 1, 2000 թ.**
  Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Վարչության այս նիստը հիմնականում անդրադարձավ երիտասարդական կառույցների վրա ծրագրի որոշակի փուլերում կոնկրետ պարտականությունների բաշխման հարցին (Հայկազունների միություն՝ մարզական օր, «Միջնաբերդ» հասարակական կազմակերպության՝ ընկերային հավաքներ, Հայորդաց տներ՝ համերգային ծրագրեր): Շեշտը դրվեց համանման նպատակ ունեցող այլ կազմակերպությունների ներգրավման վրա:

- **Նոյեմբերի 13, 2000 թ.**
  Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Վարչության ժողովի հիմնական հարցը Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի միջթեմական նոյեմբերյան ժողովի նախապատրաստման հարցն էր: Որոշվեց միջթեմական ժողովին ներկայացնել Ուխտագնացության «Ուղեցույց գրքույկի» նախագիծը, որն ուխտագնացության ընթացքում տրվելու էր բոլոր ուխտավորներին: Արձանագրվեցին երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքի առաջին արդյունքները: «Երիտասարդ հոգեբանների միությունը» ներկայացրեց կամավորների հետ աշխատանքի ծրագիր՝ «Խմբային աշխատանք վարելու ձիրքերի մշակում»:

- **Նոյեմբերի 23-24, 2000 թ.**
  Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի միջթեմական ժողով

Ժողովը գումարվեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում՝ Հովնան Արք. Տերտերյանի նախագահությամբ: Ժողովին մասնակցում էին ներքին և արտաքին թեմերի ներկայացուցիչներ: Ժողովի ընթացքում քննարկվեցին նախորդ միջթեմական ժողովի արդյունքները եւ այնտեղ արված առաջարկները: Առանձնահատուկ ուշադրության արժանացավ պետական մարմինների (1700-ամյակի պետական հանձնաժողով, քաղաքապետարան, ծրագրում ներգրավված մարզերի տեղական ինքնակառավարման մարմիններ) հետ համագործակցության մեխանիզմների քննարկումը: Տուրիստական կազմակերպությունների միության ներկայացուցիչ Արա Մարությանը ներկայացրեց Ուխտագնացների տեղավորումն ապահովելու իրենց տարբերակը: Սփյուռքի թեմերի պատվիրակները ամփոփ կերպով ներկայացրին իրենց թեմերում ուխտավորների հավաքագրման ընթացքը եւ սպասվող արդյունքները: Ժողովի ավարտից հետո թեմատիկ խմբերն անցան աշխատանքի:

- **Դեկտեմբերի 23, 2000 թ.**

Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի կենտրոնական վարչության նիստ

Գրասենյակի աշխատակազմի ձևավորումը և տեխնիկական համալրումը ապահովելուց հետո վարչության առաջին նիստը անդրադարձավ Ուխտագնացության ծրագիրը վերջնական տեսքի բերելու հարցին: Որոշվեց, որ 3-օրյա հիմնական ուխտագնացության ծրագրում լինելու են երեք հիմնական հանգրվաններ՝ Խոր Վիրապ, Էջմիածին և Երևան: Քննարկվեց ծրագրի Ինտերնետային էջի ստեղծման խնդիրը. որոշվեց, որ այն թողարկման կհանձնվի փետրվար ամսին: Քննարկվեց նաեւ որպես Ծրագրի հաջորդ փուլ Հայ Առաքելական Եկեղեցու Համահայկական Երիտասարդական Կենտրոնի ձևավորման խնդիրը:

❖ **Դեկտեմբերի 26, 2000 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի կենտրոնական վարչության նիստ

Այս նիստի ժամանակ առավել մանրամասն քննարկվեց Ուխտագնացության սցենարը՝ այնպիսի կարևոր միջոցառումներ, ինչպիսիք են մոմավառությունը Խոր Վիրապում, ուխտավորների մասնակցությունը Արևագալի արարողությանը, այցելությունը Ծիծեռնակաբերդ, Երևանում կայանալիք «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» ժամանակակից օպերայի ներկայացումը:

❖ **Դեկտեմբերի 27, 2000 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի կենտրոնական վարչության նիստ

Վարչության այս նիստում նշվեց, որ արդեն գրեթե լուծվել է գրասենյակի տեխնիկական համալրման հարցը: Քննարկվեց գրասենյակի ոլորտային պատասխանատուների վերջնական նշանակման հարցը: Որոշվեց, որ ծրագրի նախնական բյուջեի տարբերակը պետք է պատրաստ լինի փետրվարի կեսերին: Որոշվեց Ուխտագնացությանը մասնակցելու իրավերներ հղել բոլոր քույր եկեղեցիներին՝ ապահովելու էքումենիկ մասնակցությունը: Այսպիսով՝ հավատքի գալու ճանապարհը դարձնել կյանքի ճանապարհ բոլորի համար՝ առանց

խտրականության: Հովնան Արք. Տերտերյանը նշեց, որ սփյուռքի գրեթե բոլոր թեմերում նշանակված են այդ աշխատանքի պատասխանատուներ:

❖ **Դեկտեմբերի 28, 2000 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի կենտրոնական վարչության նիստ

Նիստում ընդունվեցին Գրասենյակի՝ Ուխտագնացության կազմակերպման աշխատանքները կանոնակարգող հետևյալ պայմանները՝ տարիքային ցենզը (18-35 տարեկան), կամավորի լրացնելիք թերթիկի պարտադիր կետերը, ուխտագնացության մասնակիցների թեմական առաջնորդի կողմից երաշխավորված լինելը: Որպես առանձնահատուկ կարևորության հարց շեշտվեց, որ բոլոր ուխտավորները տարրական գիտելիքներ պետք է ունենան Ուխտագնացության խորհրդի, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության, խորհուրդների և ծեսերի վերաբերյալ:

❖ **Հունվարի 12, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի ֆոնդրեյզինգային, կամավորների հետ աշխատանքի խմբերի համատեղ ժողով

Կամավորների հետ աշխատանքի պատասխանատուի առաջարկով հաստատվեց 10-օրյա ուխտագնացության վայրեր այցելելու ծրագիրը: Քննարկվեց Գրասենյակի կողմից որոշ ենթածրագրերի համար սեփական ուժերով նյութական և այլ աջակցություն հայթայթելու անհրաժեշտությունը: Ֆոնդրեյզինգի կազմակերպման ուղղությամբ, որպես առաջնային խնդիր, ընդունվեց ինֆորմացիոն փաթեթի և պոտենցիալ դոնորների ցուցակի կազմումը: Որոշվեց Գրասենյակի կամավորների մի խմբի համար կազմակերպել ծրագրեր կազմելու և դրանց համար նյութական միջոցներ հայթայթելու հատուկ դասընթաց:

❖ **Փետրվարի 13, 2001 թ.**
Երիտասարդական վարչության ընդլայնված ժողով

Ժողովին մասնակցում էին արտաքին թեմերի ներկայացուցիչներ: Այս հանդիպումը, ըստ էության, նախապատրաստումն էր միջթեմական ժողովի, ուր վերջնական

տեսքի էին բերվելու ուխտագնացության անցկացման մանրամասները: Միջթեմական ժողովի նախապատրաստական աշխատանքներին հաջորդեց Ուխտագնացության գեղարվեստական մասի նոր պատասխանատուի ներկայացրած գեղարվեստական ծրագրի, նախնական սցենարների և նախահաշիվների քննարկումը: Ժողովին մասնակցող՝ Կանադայի թեմի ներկայացուցիչ Կարեն Մկրտչյանը ներկայացրեց 1700-ամյակի՝ Միջին Արևելքի Երիտասարդական միջթեմական ներկայացուցչական ժողովի արդյունքները:

❖ **Փետրվարի 14, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի միջթեմական ժողով

Ժողովին մասնակցում էին արտաքին թեմերի ներկայացուցիչները, Հայ եկեղեցու ներքին թեմերում ստեղծված Երիտասարդաց միությունների պատասխանատուները: Երիտասարդական ուխտագնացության գրասենյակի պատասխանատու Արեգ Թադևոսյանը մանրամասն հաշվետվություն ներկայացրեց գրասենյակի մեկամսյա աշխատանքների վերաբերյալ: Զեռքբերուների շարքում նշվեց կամավորների հոսքը գրասենյակ, նրանց հետաքրքրության աճը, կանոնավոր հաճախումները Աստվածաշնչի սերտողությանը: Որպես Ուխտագնացության կարևոր աշխատանք՝ որոշվեց ամենամսյա այցելություններ կատարել ՀՀ մարզեր՝ թեմական կառույցների և պատասխանատուների հետ տեղացի ուխտավորներ ընդգրկելու եւ նախապատրաստելու նպատակով: Որոշվեց նաև ծրագրին մասնակցելու հայտերի ներկայացման հստակ վերջնաժամկետ սահմանել բոլոր (թե՛ ՀՀ և թե՛ սփյուռքի) թեմերի համար: Որոշվեց Գրասենյակի կամավորների հետ տարվելիք աշխատանքների շրջանակներում կամավորների ընդհանուր հավաք-հանդիպում կազմակերպել Հովնան Արք. Տերտերյանի հետ:

❖ **Փետրվարի 15, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի վարչության ժողով

Վարչության ժողովում ամփոփվեցին միջթեմական ժողովի ընդունած որոշումները, տրվեցին համապատասխան հանձնարարականներ: Որոշվեց կազմել ընկերային բնույթի ձեռնարկների շարք, աստվածահաճո գործերի ծրագիր՝ այցելություններ ծերանոցներ, մանկատներ, միայնակ ծերերին և այլն:

❖ **Մարտի 15, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Նիստի ընթացքում քննարկվեց թեմերի մասնակցության՝ քվոտաների, սակագների խնդիրը: Որոշվեց, որ յուրաքանչյուր թեմից առնվազն հարյուր հոգուց կազմված խմբեր կներկայանան Համահայկական Երիտասարդական Ուխտագնացությանը, և որպեսզի այս թիվը նյութական խնդիրների պատճառով չնվազի, որոշվեց, որ սակագինը կվճարեն թեմը, գրասենյակը և մասնակիցը: Որոշվեց անցկացնել ընդհանուր հավաքների մի շարք՝ հանդիպում Հովնան Սրբազանի հետ, Հավաքական Մկրտություն և հանդիպում Վեհափառ Տիրոջ հետ: Որոշվեց աշխատանքներ սկսել Գրասենյակի տարածքն ընդարձակելու ուղղությամբ:

❖ **Մարտի 21, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Վարչական այս ժողովը ամբողջապես նվիրված էր Ուխտագնացության եռօրյա ծրագրի կազմակերպման խնդիրներին: Որոշվեց ինֆորմացիա տրամադրել ուխտագնացության ժամանակացույցի վերաբերյալ: Նամակներ հղվեցին քաղաքապետարան, մարզպետարաններ:

❖ **Մարտի 22, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Վարչության այս նիստի կարևորագույն հարցերից մեկն էր Գրասենյակի կատարած այցելությունների արդյունքների ամփոփման հարցը: Լսվեց մանրամասն հաշվետվություն ՀՀ մարզերում աշխատանքների ընթացքի մասին և որոշվեց շարունակել այցելությունները՝ ըստ նախօրոք հաստատված պլանի: Քննարկվեց նաև տուրիստական հանձնաժողովի կողմից ներկայացված նախահաշվի տարբերակը: Որոշվեց այն ուսումնասիրել համապատասխան մասնագետների հետ: Գրասենյակի աշխատակիցներին հանձնարարվեց կրկին անգամ այցելել

Սևան՝ քննելու ուխտավորների տեղավորման վայրերը: Ժողովականները բոլոր կամավորների անունից ցանկություն հայտնեցին հանդիպելու Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հետ: Կարևորելով կամավորների այս դիմումը՝ Հովնան Արք. Տերտերյանը խոստացավ պայմանավորվածություն ձեռք բերել Ամենայն Հայոց Հայրապետի հետ: Ընդգծվեց գրասենյակում հոգևոր պատասխանատուի նշանակման անհրաժեշտությունը:

❖ **Մարտի 23, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Որոշվեց կամավորական ողջ խմբի և Հովնան Արք. Տերտերյանի հանդիպման օրը, օրակարգը: Նիստին ներկա էին նաև կամավորներ, որ ներկայացնում էին առաջարկներ: Նիստի ավարտին մարտի 30-ը գրանցվեց որպես Գրասենյակում գրանցված կամավորների առաջին համընդհանուր հանդիպման և հաշվետվության օր:

❖ **Մարտի 31, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Նիստի օրակարգային նյութը կամավորների ընդհանուր հավաքի հաշվետվությունն էր: Քննարկվեց և հաստատվեց Վեհափառ Հայրապետի հետ հանդիպման ծրագիրը: Որոշվեց Վեհափառ Հայրապետի հետ հանդիպման օրը անցկացնել նաև կամավորների հավաքական մկրտություն:

❖ **Ապրիլի 27, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Հրապարակվեցին ուխտագնացության մասնակիցների՝ արտաքին թեմերից ստացված ցանկերը: Մանրամասն քննարկվեց ուխտագնացության ընթացքում Համահայկական երիտասարդական ֆորումների անցկացման հարցը: Որոշվեց, որ այս ֆորումներում է մշակվելու Հայ Առաքելական Եկեղեցու Համահայկական

Երիտասարդական կառույցի ձևավորման հարցը, յուրաքանչյուր երկուշաբթի գրասենյակի աշխատանքների վերաբերյալ հաղորդագրություններ են հղվելու արտաքին թեմեր, դրանք տեղադրվելու են ուխտագնացության ինտերնետային էջում: Քննարկվեց նաև Ուխտագնացության վերջին Միջթեմական ժողովի կազմակերպման հարցը:

❖ **Մայիսի 4, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության ընդլայնված նիստ

Վերջնականապես որոշվեց ուխտավորի պայուսակի պարունակությունը: Քննարկման դրվեցին Հայաստանի և Երևանի քարտեզների մի քանի տարբերակներ: Լևոն սրկ. Պանֆյորովը ներկայացրեց «Գրպանի Աղոթագրքի» տարբերակ, որի բովանդակության մեջ ընդգրկված էին Վեհափառ Հայրապետի աղոթքի մեկնությունը, Հովնան Արք. Տերտերյանի խոսքերը, ռուսերեն, անգլերեն աղոթքներ:

❖ **Հունիսի 13, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության կենտրոնական վարչության նիստ

Նիստը կատարված աշխատանքների վերլուծությունն էր՝ Մեծ Համահայկական Ուխտագնացության ուղղակի խնդիրների լուծմանը անդրադառնալուց առաջ: Կամավորների հետ աշխատանքների պատասխանատու Կարապետ Բաղալյանը զեկուցեց Հունիսի 16-17-ին Խոր Վիրապ - էջմիածին ուխտագնացության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: Նունե Առաքելյանը ներկայացրեց իրենց Միության կողմից մշակված Ուխտագրի տարբերակը, որը Ուխտավորները պետք է ընթերցեին Եղեռնի հուշահամալիրում:

❖ **Հունիսի 18, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի միջթեմական ժողով

Միջթեմական ժողովին մասնակցում էին ներքին թեմերի ներկայացուցիչները, Հայ Եկեղեցու Երիտասարդաց Միությունների պատասխանատուներ, Գրասենյակի

ներկայացուցիչներ: Քննարկվեցին յուրաքանչյուր թեմի մասնակիցների քվոտաները, սակագները, երթուղիները, ժամանակացույցը, տեղերում կազմակերպվելիք միջոցառումները, «Գրիգոր Լուսավորիչ» ռոք օպերայի ներկայացումը և մի շարք այլ խնդիրներ: Ժողովի ընթացքում տեխնիկական և այլ խնդիրների քննարկման համար տարբեր-աշխատանքային խմբեր ստեղծվեցին:

- **Հուլիսի 5, 2001 թ.**
  Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակի թեմական ներկայացուցիչների համատեղ ժողով

Ժողովականների ուշադրությանը ներկայացվեցին ծրագրի վերջնական ժամանակացույցը, ուխտագնացների համար պարտադիր կանոնները: Թեմական ներկայացուցիչները գրասենյակ հանձնեցին թեմի պատասխանատուների ցանկերը, սակերը: Ժողովի վերջում Հովնան Սրբազանը մամլո ասուլիս անցկացրեց, ուր լրատվամիջոցների ներկայացուցիչներին ներկայացվեց ծրագրի վերաբերյալ պատրաստված վերջնական տեղեկատվական փաթեթը:

Գրասենյակի ժողովական կյանքը նպաստել է գրասենյակի և թեմերի միջև փորձի փոխանակմանը: Ընդհանուր աշխատանք կատարելու բավականությունը շարժիչ ուժ է դարձել թեմական աշխատանքները շարունակելու համար: Միջթեմական ժողովների ընթացքում պարբերաբար կլսվեն նոր աշխատանքների, ձեռնարկների ու առաջարկների մասին հաղորդումներ:

Բ. Կամավորների ներգրավման և նրանց նախապատրաստման աշխատանքային ուղղություն

Ծրագրի մշակման նախնական փուլերից իսկ պարզ դարձավ, որ նման լայնածավալ մասշտաբի Ուխտագնացությունը անհնար կլինի իրագործել առանց երիտասարդ կամավորների աջակցության: Ելնելով այս նկատառումից՝ Գրասենյակի բացման օրվանից աշխատանքային կարևորագույն ուղղություններից մեկն էր կամավորների ներգրավումը և պատրաստումը: Անդամակցությունը Գրասենյակին փաստվում է կամավորական թերթիկի լրացմամբ, պարտադիր և նախընտրելի աշխատանքների նշումով և կատարման մասին ծանոթությամբ: Սկզբնական շրջանում որպես սկզբունք գործում էր տարիքային սահմանափակումը (18-35 տարեկան), սակայն հաշվի առնելով Գրասենյակի աշխատանքներին մասնակցելու տարիքային մյուս խմբերի պատրաստակամությունը, սույն սահմանափակումը հիմնականում վերացավ:

Գրասենյակի աշխատանքներով հետաքրքրված յուրաքանչյուր երիտասարդի ներկայացվում է Համահայկական Երիտասարդական Ուխտագնացության ծրագիրը՝ իր շարունակականության մեջ՝ ընդգծելով գրասենյակին կամավորագրվելու կարգն ու ստանձնելիք պարտականությունները: Անկախ ամեն ինչից՝ կամավորների թիվը սպասվածից շատ ավելի արագ էր աճում:

Այս կտրուկ աճը ինքնաբերաբար առաջ բերեց կամավորների ընդհանուր հավաքների անհրաժեշտություն: Մարտի 30-ին տեղի ունեցավ Գրասենյակի 500 կամավորների հանդիպումը Հովնան Արք. տերտերյանի հետ: Հանդիպման մասնակիցներից Սեպուհ Արք. Չուլջյանը եւ Բագրատ աբեղա Գալստանեանը իրենց խոսքն ասացին երիտասարդներին: Հանդիպման առաջին մասը նվիրված էր Գրասենյակի՝ մկրտվելու պատրաստվող կամավորներին Մկրտության խորհուրդը բացատրելուն, իսկ երկրորդ մասում տեղի ունեցավ բուն հանդիպումը եւ կազմակերպվեց ընկերային ձեռնարկ (Հավելված 1):

Գրասենյակի գործունեության հաջորդող երեք ամիսներին կամավորների ընդհանուր թիվը հասավ 1400-ի:



Սակայն այս թիվը կայուն համարել չի կարելի, քանի որ նոր կամավորների հոսքը շարունակվում է: Գրասենյակի որդեգրած սկզբունքների խախտման դեպքում լինում են նաև հեռացումներ:

Կամավորների առաքելությունն էր նախապատրաստել և իրականացնել Առաջին Համահայկական Երիտասարդական Ուխտագնացությունը, ինչպես նաև Գրասենյակում գործող աշխատանքային խմբերում ընդգրկվելով՝ ծառայել Հայ Առաքելական Եկեղեցուն և հասարակությանը: Սակայն, քանի որ առաջին իսկ օրերից պարզ դարձավ, որ թույլ են երիտասարդների գիտելիքները ուխտագնացության խորհրդի, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության, դավանանքի և ծեսի վերաբերյալ, գրասենյակի կարևորագույն խնդիրը դարձավ կամավորագրված երիտասարդների շրջանում որոշակի ուսուցողական աշխատանքներ տանելը:

Կամավորների հետ աշխատանքը տարվում է հետևյալ ոլորտներում.

Բ.ա. Հոգևոր կրթանք

Բ.բ. Դպրոց

Բ.գ. Ընկերային ծառայություններ

Բ.դ. Պեղումներ

Բ.ե. Տաճարաշինական ջոկատ

Բ.զ. Ուխտագնացությունների և հայ ավանդական տոների կազմակերպում

Բ.է. Միջխմբային առնչություններ:

Բ.ա. Հոգևոր կրթանքի խումբ

Այս խմբի աշխատանքները կազմում են երիտասարդության հոգևոր վերածննդի հիմքը, քանի որ միայն քրիստոնեական հիմնավոր դաստիարակություն ստացած անհատը կկարողանա գնահատել մեր ազգի վիթխարի հոգևոր ժառանգությունը և անհատական հոգևոր աճի անհրաժեշտությունը: Ուրեմն, նախ և առաջ, հայ երիտասարդը պետք է գիտակցի իր քրիստոնյա լինելը, Հայ Առաքելական սուրբ Եկեղեցու զավակ լինելը և այս դավանանքի ընձեռած՝ հոգևոր բարձր կատարելության հասնելու հնարավորությունը: «Աստվածաշնչի» սերտողության, շարականների ուսուցման և բազմազան այլ ձեռնարկների իրագործողները պետք է լինեն մանկավարժության, հոգեբանության և իհարկե աստվածաբանության ասպարեզներում հմուտ հոգևորականներ: Քանի որ այս գործում արդեն իսկ բացթողումները շատ-շատ են:

Աստվածաշնչի սերտողության ժամերի շարքը մշակել և շարունակում են իրականացնել ավագ քհն. Տեր Տաճատ Դավիթյանը, Վաչագան սրկ. Բաբայանը, Լևոն սրկ. Պանֆյորովը: Հոգևոր թեմաներով քննարկումների են հրավիրվել Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը, Տ. Բագրատ աբեղա Գալստանեանը, Տ. Արարատ Ծ. Վրդ. Գալթագճեանը, Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը, Տեր Հովհաննեսը (Գանձասար), Տեր Մեսրոպը, Տեր Կյուրեղը: Աստվածաշնչի սերտողության առանձին դասեր նվիրված էին ուխտագնացության, աղոթքի, մկրտության խորհուրդների լուսաբանմանը:

Աստվածաշնչի սերտողություններին և հոգևորականների հետ հանդիպումներին զուգընթաց կազմակերպվում են նաև շարականների ուսուցման դասընթացներ: Շարականների ուսուցումը անցկացվում է Զրվեժի Հայրդաց տան «Սաղմոս» երգչախմբի և Պետական Կոնսերվատորիայի սաների գործուն աջակցությամբ:

Այս աշխատանքի շարունակականությունն անհրաժեշտ է նույնքան. որքան յուրաքանչյուր անհատի բազմակողմանի հոգևոր աճը՝ ողջ կյանքի տևողության ընթացքում: Քրիստոնեությունը որքան պարզ, նույնքան էլ խորը ուսմունք է, որին առավելագույնս տիրապետելը յուրաքանչյուր քրիստոնյայի պարտքն է:

Բ.բ.Դպրոց

Հոգևոր աճը պայմանավորված է բազմաթիվ կրթական տարրերի միասնությամբ, և այս տարրերից մեկի թերացումը անխուսափելիորեն անդրադառնում է ողջ արդյունքի վրա: Նման թերացումից խուսափելու նպատակով ստեղծվեց «Դպրոց» աշխատանքային խումբը: Խմբի աշխատանքների պատասխանատուն էր Գրասենյակի կամավոր Սոս Բալագյոզյանը: «Դպրոց»-ի առաքելությունն էր երիտասարդների ճանաչողական հետաքրքրությունների վրա հիմնված կրթական աշխատանքը՝ դասընթացների, սեմինարների, հանդիպումների և այլ ձեռնարկների տեսքով:

Խումբն իր գործունեությունն սկսելուց առաջ որդեգրել է մի քանի հիմնական սկզբունքներ.

- <u>Անընդհատ Արթնության եւ Հոգեւոր Աճի շարունակականություն</u>
- <u>Ծանոթացում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր ժառանգության հետ՝ Տիրոջ եւ Շարունակողի գիտակցմամբ</u>:
- <u>Առնվազն երեք սերունդների ("Պապեր"-"Հայրեր"-"Որդիներ") կենդանի շփում եւ համագործակցություն</u> ("Թեւավոր Արմատներ"):

Գրասենյակի կորիզը խորապես համոզված է, որ Հայոց աշխարհում որևէ աշխատանք չի կարող պսակվել հաջողությամբ, եթե չապահովվի այս սկզբունքների իրականացումը:

Գրասենյակի գործունեության ընթացքում «Դպրոց» աշխատանքային խումբը անցկացրել է հետևյալ ձեռնարկները.

❖ **Նոյեմբեր 2000 թ. - Մարտ 2001թ.**
Ֆիլմերի դիտում և քննարկում

Հաշվի առնելով այն ծանր, քայքայիչ ազդեցությունը. որ ներկայիս հասարակության վրա գործում են կինո և հեռուստաէկրանները հեղեղած առևտրային էժանագին ֆիլմերը, ինչպես նաև երիտասարդ հանդիսականների մեծ մասի մոտ դրանց նկատմամբ քննադատական վերաբերմունքի բացակայությունը, որոշվեց գրասենյակում մշակել և իրականացնել նման ազդեցությունների դեմ պայքարի ձև: Կազմակերպվեցին Աստծո խոսքը հաստատող, քրիստոնեական Սուրբ հավատն ամրապնդող ֆիլմերի դիտումներ և դրանց խմբային քննարկումներ:

❖ **Հունվար 2001 թ. - առ այսօր**
Խմբային աշխատանք վարելու ունակությունների զարգացման հոգեբանական թրեյնինգ

Այս ոլորտի աշխատանքները ձեռնարկվեցին Գրասենյակի ստեղծման ամենավաղ շրջանում Ծրագրի մեջ ներգրավված «Երիտասարդ Հոգեբանների Միություն» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի նպատակն էր Գրասենյակի բոլոր կամավորների համար կազմակերպել շփման հմտությունների զարգացման, բարդույթների հաղթահարման և խմբերի հետ աշխատանք վարելու ունակությունների ուսուցման մի մնայուն դպրոց: Այս դասընթացներին մինչև այսօր մասնակցել են ավելի քան 150 երիտասարդներ: Դասընթացներն անցածները Համահայկական Երիտասարդական Ուխտագնացության ընթացքում աշխատեցին որպես ուղեկցող-խմբավարներ հեշտացնելով Սփյուռքի եւ տեղացի ուխտավորների շփումը: Այժմ, հաշվի առնելով դասընթացների և Ուխտագնացության մեկ տարվա փորձը, մշակվում է նորացված և ավելի մեծ ընդգրկում ունեցող ծրագիր:

❖ **Հունվարի 25, 2001 թ.**
Հանդիպում մշակութաբաններ Վահան Տեր-Ղազարյանի և Շավարշ Վարդանյանի հետ

Հրավիրյալները կամավորներին ներկայացրին «Հայկական լեռնաշխարհ» տեսաֆիլմը, որը Հայկական լեռնաշխարհի պատմական հուշարձանների և հայ ժողովրդի պատմության որոշ դրվագների մասին էր: Որոշվեց այս կարգի հանդիպումներին տալ պարբերական սեմինարների բնույթ:

❖ **Փետրվարի 3, 2001 թ.**

Հանդիպում կովկասագետ-ազգագրագետ Հրանուշ Խաչատյանի հետ

Հանդիպման ընթացքում խոսվեց ժողովրդական, եկեղեցական տոների՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն դրսևորումների մասին, որոնցում խտանում են անցյալը, ժողովրդի ազգային նկարագիրը, պատմությունը և գեղագիտական ընկալումները:

❖ **Փետրվար - Ապրիլ 2001 թ.**

«Հայաստան» սեմինարային շարք

Վահան Տեր-Ղազարյանի կողմից անցկացվել է երեք սեմինար, որոնք նվիրված են եղել Հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգությանը, մասնավորապես՝ ճարտարապետությանը, լեզվին, հնագիտական նյութերին:

❖ **Մարտ - Ապրիլ 2001 թ.**

«Էպոսը որպես ազգի ինքնության դրսևորում» սեմինարային շարք

Սեմինարի հեղինակը և վարողն էր ազգագրագետ Արուսյակ Սահակյանը: Սեմինարային շարքի նպատակն էր Հայկական «Սասնա Ծռեր» էպոսի օրինակով ուժեղացնել նոր սերնդի ազգային ինքնագիտակցությունը :

❖ **Ապրիլի 3, 2001 թ.**

Հանդիպում Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, հնագետ Գրիգոր Վահանյանի հետ

Գրիգոր Վահանյանը կամավորների հետ զրուցեց հայ ժողովրդի պատմության շրջադարձային փուլերում եկեղեցու և երիտասարդության դերի մասին: Հանդիպման ընթացքում դիտվեց և քննարկվեց «Ժայռապատկեր» ֆիլմը: Պարոն Վահանյանը Գրասենյակին նվիրեց իր և իր գործընկերների կողմից պատրաստված՝ Հայաստանը ներկայացնող լազերային սկավառակը և առաջարկեց հետագա համագործակցության մի քանի ուղիներ:

❖ Ապրիլ- Մայիս 2001 թ.

Լեզուների դասավանդման մեթոդական դասընթաց

Դասընթացը կազմակերպված էր Անգլերենի Ուսուցիչների Հայաստանյան Ասոցիացիայի (AELTA) կողմից գրասենյակի այն կամավորների համար, ովքեր ցանկություն ունեին անգլերեն դասավանդել Ուխտագնացության հայաստանաբնակ մասնակիցների շրջանում՝ ափյուռքահայ ուխտագնացների հետ շփումը հեշտացնելու համար: Գրասենյակի 18 կամավորներ մասնակցեցին դասընթացին և ստացան վկայականներ:

❖ **Մայիս 2001 թ. - առ այսօր**

Օտար լեզուների դպրոց

Անգլերենի, ֆրանսերենի, ռուսերենի, եբրայերենի, թուրքերենի դասավանդումը իրականացնում են գրասենյակի կամավորները, որոնք անցել են նախօրոք կազմակերպված նախապատրաստական դասընթացներ: Չհավորվել է 15 խումբ: Դասընթացներն անց են կացվում շաբաթական երկու անգամ:

❖ **Մայիսի 11, 2001 թ.**

Հանդիպում ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի հետ

Դերասանը, անդրադառնալով հայկական աշխարհայացքին և արժեքների համակարգին, կարևորեց մշակույթ-երիտասարդություն-եկեղեցի կապը, հայտնեց Գրասենյակի համահայկական ծրագրին ուժերի ներածին չափ աջակցելու իր պատրաստակամությունը:

❖ **Մայիս 2001 թ. առ այսօր**

Գրաբարի դասընթացներ

Գրաբարի դասավանդումը իրականացվում է Երևանի Պետական Համալսարանի գրաբար դասավանդող դասախոսական կազմի աջակցությամբ: Դասընթացը կոչված է օրինակ ծառայելու դպրոցներում և ԲՈՒՀ-երում գրաբարի ուսուցումն ընդլայնելու համար:

❖ **Մայիսի 15, 2001 թ.**

Հանդիպում «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի տնօրեն Սասուն Գրիգորյանի հետ

Սասուն Գրիգորյանը այցելեց գրասենյակ՝ ծանոթանալու «Հայոց ապագան իրենց ձեռքն առած երիտասարդներին»: Պարոն Գրիգորյանը անդրադարձավ հայոց փրկությանը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ համախմբման ճանապարհով: Գրող հրապարակախոսը Գրասենյակի Գրադարանին նվիրեց իր «Դեպի էրգիր» գիրքը:

❖ **Մայիսի 16, 2001 թ.**

Հանդիպում «Միջնաբերդ» հասարակական կազմակերպության նախագահ Նունե Դիլանյանի հետ

Նունե Դիլանյանը կամավորներին ներկայացրեց ուսուցման նորագույն մեթոդներից մեկը՝ «կրեատիվ խաղը», որն օգնում է բացահայտել անձնական նախաձեռնության հնարավորությունները և ոչ ստանդարտ լուծումներ գտնել ամենաբարդ իրավիճակներում:

❖ **Մայիս 16, 2001**

Կրեատիվ խաղ «Հասարակական անձ»

Համահայկական ֆորումների նախապատրաստական աշխատանքների շրջանակներում, «Միջնաբերդ» հասարակական կազմակերպության հետ համատեղ, կազմակերպվեց «Հասարակական Անձ» կրեատիվ խաղը: Խաղի ընթացքում Գրասենյակի կամավորները քննարկեցին և մշակեցին Համահայկական երիտասարդական շարժման և Կենտրոնի ստեղծման տարբեր մոդելներ՝ փորձելով ձերբազատվել արդեն իրենց սպառած և արդյունավետությունը կորցրած հին աշխատաձևերից:

❖ **Մայիս – Հուլիս 2001 թ.**

Առաջին բուժ-օգնության դասընթաց

Դասընթացը կազմակերպված էր համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող կամավորների կողմից՝ մյուս կամավորների համար: Այս ծրագրի նպատակն էր Գրասենյակի կամավորներին առաջին բուժօգնություն ցույց տալու որոշ հմտություններ սովորեցնելը : Ծրագիրն բաղկացած էր տեսական և գործնական պարապմունքներից: Դասընթացն առ այսօր անցել են 94 երիտասարդներ, որոնց ստացած գիտելիքների արդյունավետությունն ապացուցվեց գրասենյակի կազմակերպած բոլոր ծրագրերի, ինչպես նաև բուն Ուխտագնացության շրջանում:

«Դպրոց» աշխատանքային խմբի գործունեության արդյունքներից էր Եռօրյա Մեծ Ուխտագնացության ընթացքում գրասենյակի կամավորների կողմից առաջին բուժօգնության օպերատիվ կազմակերպումը, միմյանց հետ հաղորդակցվելու հոգեբանական և լեզվական խնդիրների հաղթահարված լինելը:

Ներկայումս դասընթացների հիմնական մասը ավարտվել են, սակայն մշակվում են նոր դասընթացներ, որոնց մի մասը արդեն իսկ իրականացված և իրենց կարևորությունն ապացուցած սեմինարների և դասընթացների շարունակությունը կլինեն: Սրանցից զատ նախատեսվում է այս ոլորտի նոր աշխատանքային ուղղությունների կազմակերպում:

Բ.գ. Ընկերային ծառայություններ

«Ընկերային ծառայություններ» խմբի նպատակն է ուշադրություն հրավիրել արդի հասարակության բոլոր հիմնախնդիրների համար իրեն հայ և քաղաքացի համարող յուրաքանչյուր երիտասարդի անձնական պատասխանատվության վրա: «Ընկերային ծառայություններ» աշխատանքային խմբի գործունեության հիմքն են կազմում այցելությունները միայնակ ծերերին, ծերանոցներ, մանկատներ և գիշերօթիկ դպրոցներ, ինչպես նաև հանրապետության քաղաքների փողոցների մաքրումը, ծառատունկերի կազմակերպումը և մի շարք այլ ձեռնարկներ:

Ծերերի և մանուկների հետ աշխատանքների բնույթը պայմանավորվում է տվյալ պահի կարիքներով. երեխաների համար հագուստի և այլ անհրաժեշտ իրերի հայթայթում, մանուկների մազերի հարդարում, ծերերի հետ սրտաշահ զրույցներ և հոգեբանական աջակցության այլ ձևեր: Ծառատունկը, փողոցների և շենքերի մաքրման աշխատանքները նպաստում են հասարակության լայն շրջանակներին շրջակա միջավայրի պահպանման :

Անհրաժեշտ է նշել, որ կամավորի խնդիրն է նաև վերոհիշյալ աշխատանքների միջոցով քրիստոնեաբար ապրելու օրինակ ծառայելը: Այս աշխատանքային խմբի ծառայությունների թվում պետք է հիշատակել նաև ծերերի և մանուկների հավաքական մկրտությունների կազմակերպումը, «Աստվածաշունչ»-երի և «Նոր Կտակարան»-ների բաժանումը, ընթերցումները անկարողների համար և այլն:

Տվյալ աշխատանքային ուղղության ակտիվում արդեն գրանցված է հետևյալը.

❖ **Ապրիլի 6, 2001 թ.**
Այցելություն Երևանի թիվ 8 գիշերօթիկ դպրոց

Այցելությունը նվիրված էր Ծաղկազարդի տոնին: Դպրոցի սաներին ներկայացվեց Զրվեժի երիտասարդաց միության «Սաղմոս» երգչախմբի հետ համատեղ մշակված համերգային ծրագիրը: Տոնին հատկանշական օրհնված ծաղկեպսակներ բաժանվեցին մանուկներին:

❖ **Ապրիլի 6, 2001 թ.**
Այցելություն հենաշարժական ապարատի խախտումներով երեխաների գիշերօթիկ դպրոց

Գիշերօթիկ դպրոցի սաների ուշադրությանը ներկայացվեց համերգային ծրագիր՝ Ծաղկազարդի երգացանկով: Երեխաներին քաղցրավենիք բաժանվեց: Տոնական երեկոն ավարտվեց հավաքական աղոթքով առ Աստված:

❖ **Ապրիլի 6, 2001 թ.**
Այցելություն «Զատիկ» մանկատուն

Վարսահարդարի ծիրք ունեցող կամավորների հանպատրաստից ստեղծված խումբը հարդարեց մանկատան սաների մազերը: Ավարտելուց հետո կամավորները երեխաներին օգնեցին կատարելու տնային առաջադրանքները:

❖ **Ապրիլի 19, 2001 թ.**
Այցելություն Սովետաշենի թիվ 2 գիշերօթիկ դպրոց

Գիշերօթիկ դպրոցի սաների համար կազմակերպվել էր ժողովրդական երգերի համերգ, հրավիրվել էր նաև «Տարոն» գեղագիտական դպրոցի «Ուրարտու» մանկապատանեկան երգի և պարի խումբը: Այս այցելությունը փորձ էր դպրոցի սահմաններից ներս բերել հոբելյանական տարվա խորհուրդն ու տոնական տրամադրությունը:

❖ **Ապրիլ 21, 2001 թ.**
Երիտասարդության Համաշխարհային Ծառայության Օր (Global Youth Service Day)

Գրասենյակի կամավորները համաշխարհային այս օրը նշանավորեցին Երեւանի Օղակաձև այգում կազմակերպված ծառատունկով և Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի զբոսայգու մաքրման ու բարեկարգման աշխատանքներով:

❖ **Մարտ 2001 թ. - առ այսօր**
Մանկատների համար իրերի հավաքում և հանձնում

Գրասենյակի «Ընկերային ծառայություն» աշխատանքային խմբի՝ մանկատներ այցելություններին հաջորդեց որբ երեխաների համար հագուստների և այլ անհրաժեշտ իրերի հավաքման աշխատանքը: Այդ ձեռնարկը մեծ արձագանք գտավ գրասենյակի կամավորների մյուս աշխատանքային խմբերում:

❖ **Մայիսի 9, 2001 թ.**
Այցելություն Նորքի ծերանոց

Կամավորները ներկայացրին ծերերին հոգեհարազատ երգերի համերգ (Հայրենական Մեծ պատերազմի երգացանկից): Նույն օրը Երեւանի Սբ. Սարգիս - Եռաբլուր կատարված ուխտագնացության մասնակիցների փոքրիկ նվիրատվություններով ծերերի համար կազմակերպվեց փոքրիկ հյուրասիրություն:

❖ **Հուլիս 21**
Այցելություն «Վետերան» օթեւան

Տեր տաճատ քահանա Դավիդյանի գլխավորությամբ Գրասենյակի կամավորների խումբն այցելեց «Վետերան» օթեւան: Կազմակերպվեց օթեւանի բնակիչ 40 ծերերի հավաքական մկրտություն, որոնց կնքահայրերը դարձան Արարատի մարզպետը եւ Վեդի քաղաքի քաղաքապետը:

❖ **Օգոստոս – Հոկտեմբեր, 2001 թ.**
Ծրագիր՝ ուղղված ազատագրված տարածքների բարեկարգմանը

Գրասենյակում հավաքվում են գրքեր՝ Բերձորի վերաբնակեցվող տարածքներում գրադարաններ ստեղծելու նպատակով:

Բ.դ.Պեղումներ

Մեր ժողովրդի հեռավոր անցյալը բացահայտել և արժեքավորել ցանկացող երիտասարդներին միավորել է «Պեղումներ» աշխատանքային խումբը: Խմբի պատասխանատվությունը ստանձնել է կամավոր Արսեն Հակոբյանը, ստեղծվել է մի կուռ ջոկատ, որ ծրագրավորում է խմբի աշխատանքները և ներգրավում հետաքրքրված բոլոր անձանց: Խմբի նպատակն է քրիստոնեական հուշարձանների, մշակութային արժեքների ուսումնասիրման, ճանաչման միջոցով հաղորդակից դառնալ քրիստոնեական հոգևոր արժեքներին, համաշխարհային մշակութային ժառանգության մեջ բացահայտել հայոց մշակույթի տեղն ու դերը և այդ ճանապարհով հայ երիտասարդության մեջ սերմանել հայոց մշակույթի ժառանգորդի պատասխանատվություն:

Խումբը ոչ միայն բարեկարգման աշխատանքներ է իրականացնում խոնարհված եկեղեցիներում, կազմակերպում ճանաչողական այցելություններ դեպի վանքեր, թանգարաններ, ցուցահանդեսներ, այլև տեղեկություններ է հավաքում մշակութային կոթողների վերաբերյալ, պատրաստվում ստեղծել ինտերնետային համապատասխան էջ:

Այսպես, գրասենյակի գործունեության ընթացքում «Պեղումներ» աշխատանքային խումբը իրականացրել է հետևյալ ծրագրերը.

❖ **Ապրիլի 27, 2001 թ.**
Այցելություն Երևանի Սբ.Հովհաննես եկեղեցի

Գրասենյակի «Պեղումներ» աշխատանքային խմբի նախաձեռնությամբ հավաքված այս եկեղեցուն վերաբերող տեղեկությունները հրատարակվել և բաժանվել էին կամավորներին, ապա միայն իրականացվել էր այցելությունը:

❖ **Մայիսի 30, 2001 թ.**
Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակ - Երևանի Սբ. Զորավոր եկեղեցի

Կամավորների ավելի քան 30 հոգուց կազմված մի խումբ ուխտագնացություն կատարեց Սբ. Զորավոր եկեղեցի՝ ներկա գտնվելու Սբ. Պատարագին, առաջին անգամ ստանալու սուրբ Հաղորդություն: Կանխավ կամավորներին տրվել էր սուրբ Հաղորդության մեկնությունը:

❖ **Հունիսի 1, 2001 թ.**
Այցելություն Երևանի Սբ.Սարգիս եկեղեցի

«Պեղումներ» աշխատանքային խմբի այցելության նպատակն էր ծանոթանալ մատաղի կարգին, ապա մատաղ անել և բաժանել կարոտյալ երեխաներին:

❖ **Հունիսի 28-30, 2001 թ.**
Բարեկարգման աշխատանքներ Հավուց Թառ և Աղջոց Սբ. Ստեփանոս վանքերում

Գրասենյակում գործող «Պեղումներ» աշխատանքային խումբը կատարեց Աղջոց Սբ. Ստեփանոս և Հավուց Թառ խոնարհված վանքերի և դրանց հարակից տարածքների մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

❖ **Հուլիսի 21-22, 2001 թ.**
Այցելություն Քանաքեռի Սբ. Հակոբ և Սբ. Աստվածածին եկեղեցիներ

Այցելությունից առաջ կամավորները ծանոթացել էին եկեղեցիների պատմությանը, ճարտարապետական առանձնահատկություններին, մանրանկարչության արվեստի նմուշներին: Տեղում՝ եկեղեցիների բակում, ծավալվել էին բարեկարգման

աշխատանքներ: Մաքրվեց դեպի Սբ. Աստվածածին տանող ճանապարհը. եկեղեցու շրջակայքը:

- **Օգոստոսի 1, 2001 թ.**
  Հանդիպում Միջին Արևելքի թանգարանի տնօրեն Մարկոս Գրիգորյանի հետ

Հանդիպումը տեղի ունեցավ թանգարանում, որտեղ կամավորներն ընդհանուր գծերով ծանոթացան Արևելքի մշակույթին: Մարկոս Գրիգորյանին ներկայացվեց Համահայկական Երիտասարդական կառույցի գաղափարը, երիտասարդության և եկեղեցու միջև կապ դառնալու սրա նպատակը:

- **Օգոստոսի 8, 2001 թ.**
  Այցելություն Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան

Այցելու կամավորներին ընդունեց Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն, արվեստաբան Շահեն Խաչատրյանը: Նա ներկայացրեց Մարտիրոս Սարյանի արվեստը, նրա դերը հայկական և համաշխարհային արվեստի մեջ: Ստացված ինֆորմացիան հիմք ծառայեց գրասենյակում պատի-թերթ պատրաստելու համար:

- **Օգոստոսի 8, 2001 թ.**
  Այցելություն Հայաստանում Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված «Հայաստանը եւ Հայաստանեաց եկեղեցին» խորագրով ցուցահանդես

Ցեռնարկի մասնակիցները դիտեցին աստվածաշնչյան մոտիվներով գեղանկարչական աշխատանքներ: Այն իր նշանակությունն ունեցավ քրիստոնեական մշակույթի, հոգևոր արժեքների հետ կամավորների հաղորդակցման գործում:

- **Օգոստոսի 11, 2001 թ.**
  Ցուցահանդես՝ նվիրված Սբ. Աստվածածնի Վերափոխմանը

Գրասենյակը Սբ. Աստվածածնի Վերափոխման տոնը նշեց «Հայոց եկեղեցի» խորագրով ցուցահանդես կազմակերպելով: Ցուցահանդեսին ներկայացված էին Գրասենյակի կամավորների ավելի քան մեկ տասնյակ աշխատանքներ, որոնք այսուհետև զարդարելու են գրասենյակը: Լավագույն աշխատանքների հեղինակները պարգևատրվեցին, սակայն իր արժեքով առաջնայինը մնաց ցուցահանդեսի բոլոր մասնակիցների միասին նկարած եկեղեցին:

Այսօր «Պեղումներ» աշխատանքային խումբը շարունակում է մշակել նոր ծրագրեր: Ծավալվում է այս աշխատանքներում առավել մեծ թվով երիտասարդներ ներգրավելու գործընթաց:

Խմբի աշխատանքների առաջիկա ծրագիրը կազմված է հետևյալ ձեռնարկներից.

- **Սեպտեմբեր – Նոյեմբեր, 2001 թ.**
  Թանգարանագիտության դասընթաց (նախապատրաստական փուլում է)

Թանգարանագիտության դասընթացը Երևանի թանգարանների վերաբերյալ տեղեկություններ կհավաքի, ուղեցույցներ կկազմի, կմշակի նյութերի ներկայացման ձև:

- **Օգոստոս – Հոկտեմբեր, 2001 թ.**
  Մասնակցություն Շենգավիթում անցկացվող հնագիտական պեղումներին (նախապատրաստական փուլում է)

- **Օգոստոս – Հոկտեմբեր, 2001 թ.**
  Մասնակցություն Երեբունիում անցկացվող հնագիտական պեղումներին (նախապատրաստական փուլում է)

Բ.Ե. Տաճարաշինական ջոկատ

«Տաճարաշինական ջոկատը» հանդիսանում է հարյուր հայ երիտասարդից բաղկացած մի «բանակ», որը շաբաթական մեկ օր մասնակցում է Երևան քաղաքում և նրա շրջակայքում իրականացվող եկեղեցիների,

մանկապարտեզների, ծերանոցների, միայնակ ծերերի բնակարանների, մանկատների կառուցման և վերակառուցման աշխատանքներին:

Այսօր «Տաճարաշինական ջոկատը» արդեն մասնակցել է.

❖ **Փետրվար 2001 թ. - առ այսօր**

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարական աշխատանքներ

Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակի կամավորների 70-90 հոգանոց խմբեր յուրաքանչյուր կիրակի գրասենյակից ուղևորվում էին Մայր Եկեղեցի և մասնակցում շինարարական աշխատանքներին: Այս աշխատանքային խմբի աշխատանքները օգոստոս ամսին կատարվում էին ավելի փոքր թիմով (կապված արձակուրդային շրջանի հետ), սակայն սեպտեմբերին կայանալիք բացման արարողությանը հասցնելու նպատակով սեպտեմբեր ամսից նախատեսվում է աշխատանքները կրկնապատկել եւ աշխատել նաեւ շաբաթ օրերին:

❖ **Մարտ - Ապրիլ 2001 թ.**

Մասնակցություն Ներքին Չարբախում կառուցվող Սբ. Խաչ եկեղեցու շինարարական աշխատանքներին

Յուրաքանչյուր շաբաթ օր 20 հոգուց բաղկացած կամավորական խումբը շինարարության պատասխանատուի խնդրանքով մասնակցում էր Սբ. Խաչ եկեղեցու շինարարական աշխատանքներին:

Չսահմանափակվելով միայն մայրաքաղաքով՝ պլանավորվում է ամիսը մեկ անգամ հնգօրյա այցելություններ կատարել մարզեր՝ այստեղ ևս իրականացնելու համապատասխան աշխատանքներ, ներգրավել նաև սփյուռքահայ երիտասարդների: Ամեն աշխատանքային օր ավարտվելու է Աստվածաշնչի սերտողության ժամով, առանց որի հոգևոր աճը անկարելի է պատկերացնել՝ նույնիսկ եկեղեցու շինարարությանը մասնակցելու դեպքում:

Ծրագրում ընդգրկված բոլոր երիտասարդները, այդ թվում նաև ծրագրի ղեկավարը, աշխատանքը կատարում են կամավորական սկզբունքով՝ միայն հոգեւոր տաճարի կառուցմանը անձնական մասնակցություն բերելու ակնկալիքով:

Երիտասարդությունը. հոգալով իր ծերերի /անցյալի/,երեխաների /ապագայի/ և հոգևորի մասին, կկառուցի իր ներկան: Իսկ նման հենքի վրա խարսխված ներկան բարգավաճ ապագայի միակ գրավականն է:

Բ.գ. Ուխտագնացությունների և հայ ավանդական տոների նշումը կազմակերպող խումբ

Ուխտագնացությունները գրասենյակում կազմակերպվում են եկեղեցական տոների առիթով, իսկ համաձայն ավանդության յուրաքանչյուր տոն ինքնին ենթադրում է ուխտագնացություն և դրա անբաժանելի մաս կազմող զոհողություն, նվիրատվություն: Գրասենյակի կողմից նախաձեռնված ուխտագնացությունների ժամանակ կատարված նյութական զոհողությունները հատկացվում են «Ընկերային ծառայությունների» ծեռնարկներին:

Գրասենյակի անցկացրած ուխտագնացությունները սրանք են.

❖ **Սեպտեմբերի 30 - Հոկտեմբերի 1, 2000 թ.**

Ուխտագնացություն Երևան – Խոր Վիրապ - Էջմիածին

Սա փաստորեն Գրասենյակի կողմից կազմակերպված առաջին ուխտագնացությունն էր: Ուխտագնացությանը մասնակցեցին 13 երիտասարդ, որոնք հետագայում դարձան 1700-ամյակի Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակի ստեղծման նախաձեռնող խումբ: Ուխտագնացության մասնակիցները մեկ օր եւ մեկ գիշերում առանց հանգստի քայլեցին Խոր Վիրապից՝ Էջմիածին իրենց ուխտագնացությամբ խորհրդանշելով այն գործընթացը, որն սկսվելու էր հաջորդող օրերին և սկիզբ էր դնելու Համահայկական Երիտասարդական Կենտրոնի ստեղծմանը: Հիշարժան է, որ Ուխտագնացության ողջ ճանապարհին անձրեւում էր, սակայն ուխտավոր երիտասարդների վրա անձրևի ոչ մի կաթիլ չընկավ: Բոլորը, չնայած դժվար պայմաններին, բարեհաջող հասան Էջմիածին:

❖ **Ապրիլի 8, 2001 թ.**

Ուխտագնացություն Սեւան - Սեւանի թերակղզի

Ուխտագնացությունը նվիրված էր Ծաղկազարդի տոնին: Գրասենյակի 80 կամավորներ մեկնեցին Սեւան քաղաք, որտեղից մեկնարկեց Ուխտագնացությունը

դեպի Սեւանա թերակղզու վանական համալիր: Ուխտագնացների թափորը դիմավորեց Վազգենյան դպրանոցի տեսուչ Տ. Բագրատ աբեղա Գալստանյանը: Սբ. Կարապետ եկեղեցում ուխտավորներին ներկայացվեց Ծաղկազարդի խորհուրդը: Այդ նույն օրը Սեւան քաղաքի 600 դպրոցականներ ուխտագնացություն էին կատարել դեպի Սբ. Կարապետ, որից հետո Գրասենյակի կամավորները նրանց հետ միասին մասնակցեցին Ծաղկազարդի տոնախմբությանը:

❖ **Ապրիլի 14, 2001 թ.**
Ուխտագնացություն Աշտարակի Սբ. Մարիանե - Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի

Ապրիլի 14-ին Գրասենյակի նախաձեռնությամբ կամավորների 80 հոգուց բաղկացած մի խումբ շարժվեց Աշտարակ: Ուխտագնացությունն սկսվեց *Սուրբ Մարիանե* եկեղեցուց , որտեղ աղոթելուց և Տեր Ղևոնդ քահանայի օրհնությունն ստանալուց հետո՝ շարունակվեց դեպի Օշական: Օշականի կենտրոնում ուխտավորներին միացան տեղի երիտասարդները՝ Տեր Զոհրաբ քահանայի առաջնորդությամբ: *Սուրբ Մեսրոպ Մաշտոց* եկեղեցում ուխտագնացներին դիմավորեց Արագածոտնի թեմի առաջնորդ Վազգեն վարդապետ Միրզախանյանը: Տալով իր հայրական օրհնությունը եւ ողջունելով ուխտագնացներին՝ նա ԵՈՒԳ կամավորներին առաջնորդեց դեպի եկեղեցի, որտեղ սպասվում էր օրվա անակնկալը. գեղեցիկ զուգադիպությամբ այդ օրը Օշականում էր գտնվում Գյումրիի «Գոհար» հոգեւոր երգչախումբը, որը իր ելույթով լրացրեց եւ ամբողջական դարձրեց օրվա խորհուրդը: Համերգից հետո ուխտագնացները մասնակցեցին երեկոյան ժամերգությանը, որին հաջորդեց քրիստոնեական տոներից մեր ժողովրդի համար ամենասիրելի *սուրբ Զատկի* Պատարագը:

❖ **Ապրիլի 28-29, 2001 թ.**
Ուխտագնացություն Արենի-Նորավանք

Ապրիլի 28-ին Սյունյաց թեմի առաջնորդի և 1700 - ամյակի երիտասարդական ուխտագնացության մարզային կոորդինացիոն խմբի հրավերով ԵՈՒԳ-ի մոտ 50 կամավորներ մասնակցեցին դեպի Նորավանք կատարվող ամենամյա ուխտագնացությանը:

Ապրիլի 29-ի գիշերը ժամը 3-ին, Նորավանք տանող կամրջից սկսվեց ջահերով երթը, որին մասնակցում էին Գրասենյակի կամավորները, Վայոց Ձորի՝ Եղեգնաձորի և Արենի գյուղի երիտասարդությունը՝ թվով մոտ 700 հոգի: Ժամը 6-ին ուխտագնացները հասան Նորավանքի եկեղեցի, որտեղ նրանց դիմավորեցին մեծ հանդիսությամբ, ապա մտնելով եկեղեցի՝ ուխտավորները ունեցան հավաքական աղոթքի պահ: Դրան հաջորդեց մատաղի արարողությունը: Ժամը 10:30-ին սկսվեց Սբ. Պատարագը, որից հետո սկսվեց գեղարվեստական միջոցառման ծրագիրը:

❖ **Մայիսի 9, 2001 թ.**
Ուխտագնացություն Երեւանի Սբ. Սարգիս եկեղեցի, Եռաբլուր

Շուշիի ազատագրման եւ Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի օրը նշանավորվեց ուխտագնացությամբ: Ուխտագնացությունը սկսվեց Սբ. Սարգիս եկեղեցու վանահայր Տեր Տիրայրի օրհնությամբ, հավաքական աղոթքով: Ուխտավորները Սբ. սարգիս եկեղեցում մասնակցեցին առավոտյան ժամերգությանը, որից հետո Տեր Հայկազունի օրհնությամբ Գրասենյակի 100 կամավորներ շարժվեցին դեպի Եռաբլուրի Պանթեոն: Եռաբլուրի Սբ. Նահատակաց եկեղեցում Տեր Տիրայրը կատարեց հոգեհանգստի արարողություն: Ուխտագնացությունը ավարտվեց բոլոր զոհված ազատամարտիկների գերեզմաններին մեկական ծաղիկներ դնելով և զոհվածների ծնողների ու հարազատների հետ փոխանակած մտերմիկ խոսքերով:

❖ **Մայիսի 16, 2001 թ.**
Ուխտագնացություն Սիսիան- Որոտնավանք

Գրասենյակի՝ մարզերում տարած աշխատանքների շնորհիվ տեղերում կազմակերպվեցին նախաձեռնող խմբեր, և սկսվեց Սիսիան-Որոտնավանք Ուխտագնացությունը: Ուխտագնացությունը կազմակերպվել էր Սիսիանի հոգևոր հովիվ Տեր Նարեկի եւ իր երիտասարդական խմբի կողմից: Սիսիանի եկեղեցուց դուրս գալով՝ ուխտավորներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Արցախի հերոսամարտի ժամանակ զոհված ազատամարտիկների շիրիմներին և շարժվեցին դեպի Որոտնավանք: Ճանապարհի մի մասն անցնելուց հետո ուխտավորները կանգ առան Աղուդի գյուղում գտնվող 7-րդ դարի կոթող–հուշարձանի մոտ: Այստեղ կատարվեց Անդաստանի արարողություն, ապա ուխտագնացները շարժվեցին

դեպի կենտրոնական ուխտատեղի Որոտնավանք: 15 կմ ճանապարհը ուխտավորներն անցան հոգևոր երգերով: Հասնելով Որոտնավանք՝ կամավորները աղոթեցին առ Աստված, երգեցին Հայրապետական մաղթերգը, ապա ծանոթացան հազարամյակի պատմություն ունեցող վանական համալիրին և նրա տարածքում գտնվող կոթողներին: Ուխտագնացության տրամաբանական ավարտը դարձավ հավաքական մկրտությունը: Որոտնավանքում, որտեղ արդեն տասը տարի տեղի չէր ունեցել եկեղեցական և ոչ մի արարողություն, մկրտվեցին տեղի երիտասարդներից քսաներկուսը, և Գրասենյակի կամավորներից երկուսը: Երեկոյան ուխտագնացների խումբը, ստանալով Տեր Նարեկ քահանայի օրհնությունը, շարժվեց դեպի Երևան:

❖ **Հունիսի 16-17, 2001թ.**
Ուխտագնացություն Խոր Վիրապ - Էջմիածին

Սա գրասենյակի վերջին ուխտագնացությունն էր մինչև Առաջին Համահայկական Երիտասարդական Ուխտագանցությունը, և այս քայլով երիտասարդները փաստեցին, որ համահայկական երիտասարդական շարժումը՝ դեպի Հայ Առաքելական Եկեղեցի արդեն կայացած իրողություն է: Ուխտագնացությանը մասնակցեցին գրասենյակի ավելի քան 300 կամավորներ: Կամավորներին միացել էին Գուգարաց, Արագածոտնի և Արմավիրի թեմերի շուրջ 60 երիտասարդներ: Ուխտագնացությունը մեկնարկեց հունիսի 16-ին՝ «Սբ. Գրիգոր Լուսավորչի Ելն ի վիրապեն» տոնին, և երիտասարդ ուխտավորներն ասես փորձում էին վերապրել 301 թ. քրիստոնեության լույսի ելքը Վիրապից եւ տարածումը ողջ Հայաստանում: Ուխտագնացությունն ավարտվեց հունիսի 17-ին՝ Սբ. Էջմիածնի տոնին, որտեղ կազմակերպվեց 90 երիտասարդների հավաքական մկրտություն, որոնք մուտք գործելով Հայ Առաքելական Եկեղեցի՝ ուխտեցին ծառայել Հայ Առաքելական Եկեղեցուն և Հայրենիքին: Ուխտավորներին իր ողջույնի խոսքը հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ամենայն հայոց Հայրապետը:

❖ **Հուլիսի 14-16, 2001 թ.**
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ
Խոր Վիրապ- Էջմիածին – Սևան - Երևան

Ուխտագնացությանն իրենց մասնակցությունը բերեցին աշխարհի տարբեր անկյուններից ժամանած շուրջ 2000 հայ երիտասարդներ: Ուխտագնացությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն ծառայելու նրանց պատրաստակամության կենդանի ապացույցն էր: Հայ ժողովրդի պատմության ընթացքում սա առաջին նմանատիպ ձեռնարկն էր և իրապես նոր էջ էր բացում Երիտասարդություն-Եկեղեցի հարաբերություններում: Սա նաև Հայաստանի եւ սփյուռքի երիտասարդներին ի մի բերելու եւ նրանց միջև հարատեւ ու կայուն կապերի հաստատման մի խիստ լուրջ քայլ էր: (Ուխտագնացությունը առավել մանրամասն ներկայացված է առանձին բաժնով):

❖ **Հուլիսի 21-22, 2001 թ.**
Ուխտագնացություն Սիսիան - Վարդան Մամիկոնյանի շիրմի մոտ

Սա տարածքային ավանդական ուխտագնացություն է, որը պատմության մեջ առաջին անգամ պաշտոնապես կազմակերպվել էր եկեղեցու կողմից: Ուխտագնացությունը միասնականության ևս մի դրսևորում էր, քանզի միավորել էր Երևանյան գրասենյակի և Սիսիանի Սբ. Հովհաննես եկեղեցուն կից Երիտասարդաց միության կամավորներին:

❖ **Սեպտեմբերի 17, 2001 թ.**
Ուխտագնացություն (նախապատրաստական փուլում է)

Ուխտագնացությունը նվիրված կլինի Սբ. Խաչի (Ուլնոց) տոնին:

❖ **Սեպտեմբերի 18-20, 2001 թ.**
Գրասենյակի կամավորների և կույր երեխաների հատուկ գիշերօթիկ դպրոցի սաների ուխտագնացություն և հավաքական մկրտություն (նախապատրաստական փուլում է)

Ուխտագնացության առաքելությունն՝ է երիտասարդության և հասարակության ուշադրությանը բևեռել հաշմանդամ երեխաների խնդիրներին, նրանց հավաքել Հայ Առաքելական Եկեղեցու հովանու ներքո, համընդհանուր հոգածության առարկա դարձնել:

Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակի աշխատանքներին շարունակական բնույթ տալու լավագույն եղանակն է ավանդական եկեղեցական տոների նշումը, և դրանց հետ կապված՝ այս կամ այն սրբատեղին այցելելու ավանդույթների վերականգնումը:

Այս խմբի աշխատանքների մեջ կմտնի նաև ուխտատեղին ժամանակ առ ժամանակ բարեկարգելու, հետագայում գուցեև վերականգնելու խնդիրը: Սա կնպաստի հայրենի երկրի ճանաչմանը, երիտասարդության մեջ հետաքրքրության ալիք կառաջացնի ազգային դասերի հանդեպ:

Բ.է. Միջխմբային առնչություններ

Շատ կարևոր է հիշյալ խմբերի փոխկապակցվածությունը, փոխլրացումը և փոխօգնությունը: Գրասենյակի բոլոր աշխատանքային խմբերը նախատեսված էին որպես միասնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպչական խմբեր: Ընդհանուր ժողովների ընթացքում կառաջանան միմյանց գործունեությանը աջակցելու, աշխատանքները լիարժեք կերպով կազմակերպելու, նոր առաջարկներ անելու պայմաններ: Այսպիսով կենտրոնի ղեկավարության համար կհեշտանա բոլոր խմբերի աշխատանքների կոորդինացումն ու արդյունավետության բարձրացման գործընթացը:

Գ. Ներքին թեմերի հետ աշխատող խումբ

Հայաստանը լեռնաշղթաներով կտրատված մի աշխարհ է, ուստի կապը անգամ ներքին թեմերի և կենտրոն հանդիսացող Երևանի միջև միշտ չէ, որ գործում է անխափան: Սակայն բոլոր այն ծրագրերը, որ հավակնում են համահայկական կոչվելու, անհնարին են առանց հայաստանյան և արցախյան մասշտաբների ապահովման:

Ներքին թեմերի երիտասարդության համախմբումն ապահովելու համար գրասենյակը մշակել է բոլոր մարզերը այցելելու ծրագիր: Մարզեր կատարած այցելությունների ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել տեղի թեմական առաջնորդի, հոգևոր դասի, կամավոր-ուխտավորների, գեղարվեստական խմբերի, լրատվական միջոցների, գիտամշակութային հաստատությունների, տնտեսավարող կառույցների ներկայացուցիչների և, առհասարակ, շահագրգիռ անձանց հետ:

Այցելությունների երթուղիները մշակելիս հանրապետության տարածքը բաժանվել է չորս շրջանների կենտրոնական, հարավային, հյուսիսային և արևմտյան: Այցելությունները կատարվել են երկու փուլով:

Առաջին փուլ՝

- Կենտրոնական շրջան - Մարտի 3, 4, 5, 2001թ.
  Մեկօրյա այցելություններ Արմավիր, Էջմիածին, Աշտարակ, Արտաշատ:
- Արևելյան շրջան – Մարտի 3, 4, 5, 2001թ.
  Այցելություններ Սևան, Գավառ, Ծաղկաձոր, Հրազդան, Վանաձոր, Իջևան:
- Հյուսիսային շրջան – Մարտի 10, 11, 12, 2001թ.
  Այցելություններ Գյումրի, Սպիտակ, Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի, Արթիկ:
- Հարավային շրջան – Մարտի 10, 11, 12, 13, 2001թ.
  Այցելություններ Եղեգնաձոր, Սիսիան, Գորիս, Մեղրի, Դափան, Ստեփանակերտ, Շուշի:

Երկրորդ փուլ՝

- Արևելյան շրջան – Ապրիլի 6, 8, 9, 2001թ.

Այցելություններ Սևան, Գավառ, Ծաղկաձոր, Հրազդան, Վանաձոր, Իջևան:

- Հյուսիսային շրջան – Ապրիլի 6, 8, 9, 2001թ.
  Այցելություններ Արթիկ, Գյումրի, Սպիտակ, Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի:
- Հարավային շրջան – Ապրիլի 6, 8, 9, 10, 2001թ.
  Այցելություններ Եղեգնաձոր, Սիսիան, Գորիս, Մեղրի, Ղափան:

Այցելությունների շնորհիվ գրասենյակի գաղափարակիցներն են դարձել յուրաքանչյուր քաղաքում ստեղծված երիտասարդական կառույցները, ինքնակառավարման մարմինները, երիտասարդական հասարակական կազմակերպությունները, կրթօջախները:

Մարզերի երիտասարդությանը ներկայացվել է Համահայկական Երիտասարդական Ուխտագնացության ծրագիրը, որն առաջին քայլն էր Համահայկական Երիտասարդական Կենտրոնի ստեղծման գործում: Մարզերի երիտասարդությունը մեծ պատրաստակամությամբ է մոտենում Կենտրոնի ստեղծման գաղափարին: Համագործակցությունն արդեն իսկ տալիս է այնպիսի արդյունքներ, ինչպիսիք են համատեղ ուխտագնացությունները, Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակի փորձի օգտագործումը տեղերում, արված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը պատի-թերթերի փոխանցման միջոցով:

Տեղական ծրագրերի իրականացումը կազմակերպվում է սուղ նյութական միջոցներով: Սակայն, քանի որ այս ծրագրերը կրում են հոգևոր բնույթ, նյութական միջոցների սակավությունը չի արդարացնում թերությունները, առավել ևս՝ ձախողումը:

Հուլիսի 16-ին Սևանում տեղի ունեցած Ուխտագնաց-Երիտասարդների Համահայկական առաջին ֆորումին իրենց մասնակցությունը բերեցին Համահայկական Երիտասարդական Ուխտագնացության թեմական կոորդինատորները, որոնք հանդես եկան հետագա համագործակցության առաջարկներով, այն է՝ ամսագրի համատեղ հրատարակում, համատեղ ճամբարային թրեյնինգների անցկացում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

Դ. Արտաքին թեմերի հետ աշխատող խումբ

Ի տարբերություն ներքին թեմերի՝ արտաքին թեմերի հետ աշխատանքը սահմանափակվում է ինտերնետային կապով, որը հաստատվել է գրասենյակի և որոշ արտաքին թեմերի պատասխանատուների միջև: Չնայած ուղղակի կապի բացակայությանը, Համահայկական Առաջին Ուխտագնացությանը մասնակցեցին Միացյալ Նահանգների Արևելյան և Արևմտյան թեմերից, Կանադայից, Ռուսաստանի Ֆեդերացիայից, Եգիպտոսից, Իսպանիայից, Վրաստանից, Արգենտինայից, Ֆրանսիայից և Իրանից ժամանած երիտասարդները:

Կարելի է հուսալ, որ Հուլիսի 14-ին Սևանում կայացած Համահայկական Ֆորումի ժամանակ ընդունված որոշման համաձայն սփյուռքից ժամանած յուրաքանչյուր ուխտավոր ինքը կստանձնի գրասենյակի նպատակների տարածման աշխատանքն իր շրջապատում, քանի որ համահայկականության գիտակցությամբ է, որ աշխարհասփյուռ երիտասարդությունը կպահպանի իր ազգային ինքնությունը:



Ե. «Ծրագրային» աշխատանքային խումբ

Գրասենյակի գոյության առաջին երկու շաբաթվա ընթացքում պլանավորված ծրագրերի թիվը կրկնապատկվեց, և այս միտումը շարունակվում է առ այսօր:

Երիտասարդների ճկուն մտածողությունը և Գրասենյակի նպատակին ծառայելու մղումը նոր մտահղացումներ են առաջ բերում: Որպեսզի այդ գաղափարները համակարգված վիճակի բերվեն և դրանց իրագործման համար նյութական միջոցներ հայթայթվեն, ստեղծվել է «Ծրագրային» աշխատանքային խումբը: Աշխատանքային խմբի շրջանակներում գործում է ֆոնդռեյզինգի դպրոցը, ուր ուսումնասիրվում են յուրաքանչյուր գաղափարի իրագործման անհրաժեշտությունը, նպատակը, խնդիրները, իրագործման մեթոդները, ծրագրի գնահատումը: Կազմվում է յուրաքանչյուր ծրագրի մանրամասն բյուջե: Ուսուցանվում էր անհատ ներդրողների եւ ֆոնդերի հետ աշխատանքի մարտավարություն: Դասընթացների մասնակիցների կողմից մշակվել են այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «Տաճարաշինական ջոկատի» ստեղծումը, «Ընկերային ծառայություններ» մատուցող ջոկատը, «Համահայկական երիտասարդական ճամբարներ», «Երիտասարդ ուխտագնացների» ամենամյա ֆորում ծրագրերը:

Բոլոր մշակված ծրագրերը շարունակական բնույթ են կրում:

«Տաճարաշինական ջոկատը» ողջ տարվա ընթացքում կմասնակցի Երեւանում եւ մարզերում նոր կառուցվող եկեղեցիների շինարարական աշխատանքներին, խոնարհված եկեղեցիների վերականգնողական աշխատանքների, մանկապարտեզների, դպրոցների, հիվանդանոցների, ակումբների եւ ծերանոցների վերանորոգման եւ շինարարական աշխատանքներին: Ծրագիրը հայաստանաբնակ եւ սփյուռքահայ երիտասարդներին հնարավորություն կտա համատեղ աշխատանքի միջոցով կառուցելու իրենց հոգու տաճարները:

«Ընկերային ծառայություններ» ծրագիրը կոչված է ապահովելու Գրասենյակի ընկերային ձեռնարկներ կազմակերպող ուղղության շարունակականությունը, զարգացումը և ընդլայնումը:

«Համահայկական երիտասարդական ճամբարներ» ծրագիրը նախատեսում է Տաթեւի վանքի, Հաղարծնի, Գեղարդի, Գլաձորի և երբեմնի այլ հռչակավոր կրթօջախների մոտ ճամբարներ հիմնելով, այնտեղ որոշակի կրթական ձեռնարկներ կազմակերպելով (ճարտարապետության, պատմության, որմնանկարչության վերաբերյալ ճանաչողական սեմինարներ, հոգեւորականների, արվեստագետների եւ այլ մտավորականների հետ հանդիպումներ) կապող օղակի դեր կատարել սերունդների եւ ժամանակների միջեւ:

«Ծրագրային» աշխատանքային խումբը հիմնականում պահպանում է ծրագրի շարունակականությունը: Ծրագրային այս գաղափարների մեծ մասը վերածվելու են Համահայկական Երիտասարդական Կենտրոնի աշխատանքային ուղղությունների: Այս աշխատանքային խմբի գործունեության ընթացքում գրանցվել են մի շարք հաջողություններ: Կամավորական աշխատանքների ծրագրերից մեկի իրականացման համար հաջողվեց աջակցություն ստանալ «Համաշխարհային Երիտասարդական Ծառայության Օրվա» կազմկոմիտեից: Մի քանի գործարարներ փոքր ներդրումներ արեցին «Ընկերային ծառայությունների» խմբի աշխատանքների կազմակերպման, ինչպես նաեւ տաճարաշինական ջոկատի մի քանի ձեռնարկների իրականացման համար:

Զ. Լրատվական ծառայություն

Գրասենյակային այս և մյուս ձեռնարկների վերաբերյալ տեղեկություններ տալու խնդիրն իրականացնում է Գրասենյակի լրատվական ծառայությունը: "Շողակաթ" հեռուստաստուդիայի միջոցով հեռարձակվել են հեռուստատեսային և ռադիո բազմաթիվ հաղորդումներ, ընդհանուր թվով 20 հաղորդագրություններ են առաքվել ներքին և արտաքին թեմեր:

Ծրագրվում է Գրասենյակի ինտերնետային էջը վերափոխել Համահայկական Երիտասարդական Կենտրոնի էջի և պարբերական վերանայումների ու թարմացումների միջոցով այն դարձնել Կենտրոնի խոսնակը: Այժմ աշխատանքներ են տարվում առավել լայնածավալ ինտերնետային ծրագրի մշակման ուղղությամբ, որը կստեղծվի Գրասենյակի եւ Ամերիկայի Արեւմտյան թեմի Երիտասարդաց Միության համատեղ ուժերով: Այս նոր էջը հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել ժամանակակից հեռահաղորդակցման միջոցները՝ Հայաստան-Սփյուռք երիտասարդական երկխոսության եւ համագործակցության կայացման համար:

Ինտերնետային կապի բացակայության պատճառով Հայաստանի ներքին թեմերը ինֆորմացիոն դաշտից դուրս չթողնելու նպատակով ծրագրվում է հրապարակել Կենտրոնի տեղեկագիր, որը կներկայացնի Կենտրոնի աշխատանքները, ծրագրերը եւ փորձի փոխանակման հնարավորություն կընձեռի արդեն հայաստանյան մակարդակով:

Այս աշխատանքները ուղղված են ապագայում Գրասենյակի սեփական Լրատվական Ծառայության ձեւավորման նպատակին: Սա հնարավորություն կտա առավել ճիշտ եւ մշակված կերպով հասարակայնությանը ներկայացնելու Գրասենյակի աշխատանքները եւ նպատակները: Այս ուղղությամբ տարվող աշխատանքը մեծապես կնպաստի Սփյուռքի հետ կապերի կազմակերպմանը եւ համապատասխան տեղեկատվական ցանցի ստեղծանը:

Գրասենյակի Լրատվական Ծառայության կողմից ստեղծվել էին Գրասենյակի բոլոր աշխատանքային ուղղությունները ներկայացնող տեղեկատվական շուրջ 40 պաստառներ, որոնց միջոցով Ուխտագնացության ընթացքում սփյուռքհայ ուխտավորները կարողացան առավել լիարժեք կերպով ծանոթանալ Գրասենյակի մեկամյա փորձին:

Լրատվական ծառայության շրջանակներում նույնպես կազմակերպվել են մի շարք ուսումնական ձեռնարկներ, որտեղ առավել մեծ փորձ ունեցող կամավորները

դասավանդում էին ԶԼՄ-ների հետ աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ գիտելիքներ:

Գրասենյակի գործունեության ողջ ընթացքում կուտակված ֆոտո - վիդեո-աուդիո նյութերը հավաքվել եւ համակարգվել են համապատասխան արխիվներում: Հիմնականում այս աշխատանքային խմբի ջանքերով է ստեղծվել այն փոքրիկ գրադարանը, որն այժմ համալրվում է նոր գրականությամբ եւ բաց է Գրասենյակի բոլոր կամավորների համար:

Է. Համահայկական Երիտասարդական Առաջին Ուխտագնացություն

2001 թ. հուլիսի 7-22-ը կայացավ Առաջին Համահայկական Երիտասարդական Ուխտագնացությունը: Այս յուրահատուկ ձեռնարկը իրապես մի նոր էջ բացեց հայ ազգի հոգեւոր կյանքում: Այս օրերին մեկտեղված շուրջ 2000 երիտասարդ հայորդիները վերահաստատեցին իրենց ուխտը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Հայրենիքի առջեւ:

Հուլիսի 9-ին ԱՄՆ-ից և Կանադայից ժամանած ուխտավորները Հայաստանում Քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների եկեղեցական գրասենյակի վարիչ-քարտուղար Հովնան Արք. Տերտերյանի առաջնորդությամբ մեկնեցին Սևանա թերակղզի: Ուխտավորներին դիմավորեցին Վազգենյան դպրանոցի սաները, որոնք անգլերենով և հայերենով ներկայացրին դպրանոցի պատմությունը, դպրանոցի «Լուսավորիչ» երգչախումբը հանդես եկավ հոգևոր երգերի համերգով:

Ուխտավորներն այցելեցին թերակղզու եկեղեցիները:

Սրբազանի գլխավորությամբ իրենց աղոթքներն առ Աստված ուղղելուց հետո, ուխտավորները կրկին ունկնդրեցին դպրանոցի սաներին, ապա Հովնան Սրբազանը անգլերենով և հայերենով համառոտ ներկայացրեց ուխտագնացության 10- օրյա ծրագիրը:

Հաջորդ օրը՝ հուլիսի 10-ին, Սևան - 2 հյուրանոցում բարձրացվեցին Հայաստանի Հանրապետության և Առաջին Համահայկական Ուխտագնացության դրոշները:

Հովնան Սրբազանի և հոգևոր դասի առաջնորդությամբ ուխտավորները մեկնեցին Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի: Օշականում ուխտավորների շարքերը համալրվեցին Իսպանիայից, Եգիպտոսից, Շվեյցարիայից ժամանած ուխտավորներով և ԵՈւԳ- ի կամավորներով: Օշականում ուխտավորներին դիմավորեցին Հայր Վազգենը և քաղաքապետը: Հոգևոր արարողությունից հետո ուխտավորներն այցելեցին Սբ. Մաշտոցի գրատուն, ապա գերեզման՝ մատուցելու իրենց հարգանքի տուրքը:

Հաջորդ ուխտատեղին Աշտարակի Կարմրավոր եկեղեցին էր, ուր բոլորը ծնկաչոք երգեցին «Տեր ողորմեան»: Այս ամենից հետո ուխտավորները ճանապարհվեցին դեպի Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցի:

Սփյուռքից ժամանած ուխտավորները ականատես եղան հայկական լավաշի պատրաստմանը և տեղում ճաշակեցին տաք լավաշն ու պանիրը:

Թեմի մանուկների կատարմամբ հնչեցին ազգային-հայրենասիրական երգեր: Երեկոյան Սբ. Գևորգ եկեղեցում մատուցվեց երեկոյան ժամերգություն, որով և ավարտվեց Համահայկական Երիտասարդական Ուխտագանացության առաջին օրը:

Հաջորդ օրն ուխտավորներին սպասում էր նոր ճանապարհ՝ դեպի Սարդարապատ: Այստեղ նրանց դիմավորեց տեղի երիտասարդական ազգային պարերի խումբը, երգ-երաժշտությունը նրանց ուղեկցեցին մինչև Ազգագրության թանգարան: Թանգարանում, Հովնան Սրբազանի ողջույնի խոսքից և կամերային երաժշտություն լսելուց հետո, ուխտավորներին հնարավորություն տրվեց շրջել թանգարանում, ծանոթանալ հայ ժողովրդի մշակութային անսպառ ժառանգության մասունքներին:

Սարդարապատ այցելությունից հետո երիտասարդները մեկնեցին Երևան՝ ծանոթանալու մայրաքաղաքի տեսարժան վայրերին: Ուշ երեկոյան ուխտավորները վերադարձան հյուրանոց:

Հուլիսի 13-ը Հաղարծնավանք ուխտ կատարելու օրն էր: Հաղարծինում ուխտավորներին դիմավորեց Գուգարաց թեմի թեմական առաջնորդի փոխանորդ Հոգեշնորհ Տ. Դերենիկ Վրդ. Դավթյանը: Նա մանրամասնորեն ներկայացրեց վանքի պատմությունը: Ուխտագնացության տրամաբանական շարունակությունը դարձավ մկրտության արարողությունը: Մկրտվեցին և Հայ Առաքելական Եկեղեցու զավակներ դարձան ԵՈւԳ-ի կամավորներից և սփյուռքահայ երիտասարդներից մի քանիսը: Մկրտության արարողությունից հետո ուխտավորները հավաքվեցին եկեղեցու բակում ճաշելու՝ միաժամանակ ըմբոշխնելով Գևորգյան ճեմարանի սաների կատարմամբ հնչող երգերը, որոնց ձայնակցում էին ներկա հոգևոր հայրերը: Երեկոյան խումբը վերադարձավ Սևան:

Չորրորդ օրվա սրբատեղին, ուր պիտի այցելեին ուխտավորները՝ Գեղարդն էր: Գեղարդի ճանապարհին ուխտավորների շարքերը համալրեց Հայր Զատիկի գլխավորությամբ Մարսելից ժամանած ուխտավորների նոր խումբը: Երգերով հանդես եկան Սևանի Վազգենյան դպրանոցի սաները և մանուկների խումբը: Գեղարդյան ուխտն ավարտվեց զուռնա-դհոլի ներքո բռնված «Քոչարիով»:

Օրն ավարտվեց Նոր-Նորքի Հայորդաց տանը: Հայորդաց տան սաները իրենց համերգն սկսեցին և ավարտեցին Տերունական աղոթքով և հոգևոր երգերի հիանալի կատարումներով ցնցեցին ուխտավորներին: Մանուկների պատրաստած

համերգը այնքան հուզիչ էր, որ նրանք բազմիցս արժանացան բուռն ծափահարությունների: Այս ամենից հետո ուխտավորներին ազատ ժամ տրվեց Երևանին ծանոթանալու համար: Ուշ երեկոյան նրանք վերադարձան Սևան:

Քանի որ սա Մեծ Ուխտագանցության նախորդ օրն էր, անհրաժեշտ էր հանգիստ, որպեսզի ըստ արժանվույն դիմակայեին տասնօրյակի գագաթնակետը հանդիսացող եռօրյա ուխտի դժվարություններին:

Եռօրյայի առաջին օրը՝ հուլիսի 14-ը, սկսվեց Համահայկական Երիտասարդական Ֆորումը, որը քննության առավ ծրագրի շարունակություն հանդիսացող «Երիտասարդական կենտրոն» ստեղծելու գաղափարը: Այս կենտրոնը ենթադրում է մշտական կապող օղակ հանդիսանալ աշխարհասփյուռ հայ երիտասադների և Հայ Առաքելական եկեղեցու միջև: Ֆորումին մասնակցում էին ժամանած խմբերի պատասխանատուները և տեղի երիտասարդության ներկայացուցիչներ:

Ֆորումից և ճաշից հետո ուխտավորները շարժվեցին դեպի Քրիստոնեության բնօրրան՝ Խոր Վիրապ, ուր նրանց սպասում էին Հայաստանի թեմերից ժամանած ուխտավորները: Համերգից և թեմական առաջնորդների ոգեշունչ ելույթներից հետո ուխտավորների մեծ թափորը շարժվեց դեպի վանքը, որտեղ կատարվում էր հանգստյան ժամերգություն: Ժամերգությանը հաջորդեց Գերաշնորհ Հովնան Արք. Տերտերյանի խոսքը: Ապա սրտի խոսք ասաց Վազգենյան դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Բագրատ Աբղ. Գալստանյանը:

Հոգևոր արարողությունից հետո, ներկա հոգևորականներից Մայամիի հոգևոր հովիվ՝ Արժանապատիվ Տ. Վարդան Քհն. Զուլֆայանը իջավ Խոր Վիրապ, Լուսավորչի կանթեղից լույս վերցրեց ու վեր հանելով՝ բաժանեց հոգևոր դասին և երիտասարներին: Հոգևորականներից և երիտասարդներից կազմված ուխտավորների մեծ խումբը վառված մոմերով շարժվեց վար՝ խորհրդանշելով կյանքում նույնպես իրենց ուխտավոր լինելը: Երկժամյա քայլարշավի ընթացքում երիտասարդները հնարավորություն ունեցան զրուցելու տեղի բնակչության հետ:

Վաղ առավոտյան խումբը շարժվեց դեպի Սբ. Հռիփսիմե վանք: Երկժամյա հանգստից հետո՝ արևածագին Հովնան Սրբազանի գլխավորությամբ, շարականների հնչյունների ներքո ուխտավորները շարժվեցին դեպի Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Այստեղ նրանց դիմավորեց հոգևոր դասը՝ Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի գլխավորությամբ: Տրդատի կամարի հովանու ներքո տեղի ունեցավ Արևագալի ժամերգությունը, որից հետո խոսեց Հովնան

Սրբազանը և Վեհափառ Հայրապետին հրավիրեց իր Հայրապետական պատգամը տալու ուխտավոր երիտասարդներին:

Ուխտավորները մասնակցեցին Սուրբ պատարագին և Սուրբ Հաղորդություն ստացան: Հանդիսավոր Սուրբ պատարագը մատուցեց Հովնան Սրբազանը, քարոզ կարդաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Պատարագից հետո խումբը՝ 1700 երիտասարդ, շարժվեց Սևան:

Երեկոյան կազմակերպված էր համերգ-դիսկոտեկ, որը բարձր տրամադրություն առաջ բերեց: Միայն արևածագին մասնակիցները թողեցին պարահրապարակը:

Համահայկական Երիտասարդական Ուխտագնացության ավարտական փուլն սկսվեց Ծիծեռնակաբերդում՝ մեծ եղեռնի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու արարողությամբ: Ուխտավորների կողմից կարդացվեց Ուխտագիր՝ հավատարիմ մնալու Հայ Եկեղեցու ուղղափառ դավանանքին, սրբազան ավանդույթներին, հայրենիքին:

Ես՝ որպես առաջին քրիստոնյա պետության ժառանգորդ, Հայկի եւ Թորգոմա տան ծուխը պահպանող, մեր պապերի կտակած արժեքները ապագային փոխանցող, իմ ուխտն եմ վերահաստատում Արարիչ Աստծո, Սուրբ Հայրերիս ու Հայ Առաքելական Մայր Եկեղեցու առջեւ. հավատարիմ մնալ մեր նախնյաց սուրբ հավատքին՝ հայ եկեղեցու ուղղափառ դավանությանը, սրբազան ավանդույթներին, սիրով հավատով եւ հույսո՝ վերածնված Մայր Եկեղեցու սուրբ ավազանից, պահել առ Տերն իմ Հիսուս Քրիստոս հավատարմությունս եւ առ Աստված ապավինության հավատի գործերով ծառայել հայրենիքիս, եկեղեցուս եւ ժողովրդիս: Ուխտում եմ եւ ընդունում.

Ամեն

Ծիծեռնակաբերդում կարդացված Ուխտագրի տեքստը

Ծիծեռնակաբերդից ուխտավորներն ուղղվեցին Կասկադ՝ դիտելու «Գրիգոր Լուսավորիչ» ռոք օպերան, որը մեծ ոգևորություն առաջացրեց ներկաների մեջ, քանզի այն արդիական մի մոտեցում էր մեր դարավոր պատմությանը, և կամուրջ՝ զցված երիտասարդական տրամադրությունների և Հայ Առաքելական եկեղեցու միջև:

Չնայած, որ ծրագրի գագաթնակետ հանդիսացող եռօրյան ավարտվում էր, ուխտագնացությունները շարունակվում էին նույն խանդավառությամբ և ոգևորությամբ: Դրա մասին էր վկայում ուխտավորների կրկին անգամ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին և Խոր Վիրապ վերադառնալու ցանկությունը: Ուխտագանցության

կազմակերպիչների և Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի վերաբերմունքը հաստատում էր, որ ամեն մի նման նվիրական ցանկություն աջակցություն կգտնի Հայաստանում: Ամենայն Հայոց Հայրապետի հանդիպումը ուխտավորների հետ յուրաքանչյուր երտասարդի համար հավատի նորոգման մի նոր քայլ էր, հավատ, որ հայ երիտասարդությունը գտնվում է Հայ Առաքելական Եկեղեցու հոգածության ներքո: Իսկ Խոր Վիրապում, Վիրապ իջնելով, մեկական մասնիկ վերցրին այն ծանր խաչից, որ կրել է քրիստոնյա հայը՝ սկսյալ Գրիգոր Լուսավորչից:

Նման համընդհանուր հուզական դաշտը չէր կարող իր տրամաբանական շարունակությունը չունենալ. պայմանավորվածություն ձեռք բերվեց հոկտեմբերի վերջին թեմերի ներկայացուցիչների ֆորում գումարելու մասին, ուր մարմնավորում կստանա ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ:

Ը. Ուխտագնաց-Երիտասարդների Համահայկական առաջին Ֆորում

Համահայկական Երիտասարդական Մեծ Ուխտագնացության կարևորագույն իրադարձություններից էր Հուլիսի 14-ին «Սևան - 2» համալիրում տեղի ունեցած Ուխտագնաց երիտասարդների համահայկական առաջին Ֆորումը: Ֆորումը նախագահում էր 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի վարիչ-քարտուղար Հովնան Արք. Տերտերյանը, մասնակցում էին հոգևորականներ, ներքին և արտաքին թեմերում գործող երիտասարդաց միությունների ներկայացուցիչներ:

Ֆորումը բաղկացած էր երկու նիստից: Առաջինում ներկայացան ֆորումի մասնակիցները: Նրանք ներկայացրին իրենց թեմերը, թեմերում գործող երիտասարդական ծրագրերը, կառույցները: Երիտասարդական Ուխտագնացության գրասենյակի պատասխանատու Արեգ Թադևոսյանը զեկուցեց գրասենյակի վեցամսյա աշխատանքի մասին, ներկայացրեց աշխատանքային ոլորտները:

Ֆորումի երկրորդ նիստի ընթացքում մշակվեց Համահայկական Երիտասարդական Կառույցի ձևավորման խնդիրը եւ կազմվեց համապատասխան ծրագիր առաջարկ (Հավելված 3):

Որոշվեց կազմել ժամանակավոր Միջազգային հանձնախումբ, որը կհանդիպի երկու անգամ՝ հոկտեմբեր եւ փետրվար ամիսներին, եւ կնախապատրաստի Հայ Եկեղեցու Երիտասարդաց Կազմակերպության Միջազգային խորհրդի ստեղծումը, կհիմնադրվի 2002 թ. հունիս ամսին կայանալիք Համահայկական Երիտասարդական Պատգամավորական ժողովում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսօր՝ Հայաստանի Հանրապետություն կոչվող հայկական պետության վերաստեղծման տասնամյա հոբելյանի նախօրեին անհրաժեշտ է հիշել և հիշեցնել բոլորին, որ հենց Հայ Առաքելական եկեղեցին է հանդիսանում այս պետության յուրատեսակ նախասկիզբը: Տասնյոթ դար շարունակ եկեղեցու շնորհիվ էր, որ ժողովուրդը, անցնելով անհաշիվ աղետների, հարձակումների և այլ փորձությունների միջով, կարողացավ կրել Լույսի Խաչը և պահպանել Հայության Ազգային Վերածննդի հիմքերը: Անկասկած Քրիստոսի ծնունդի երրորդ հազարամյակի արշալույսին Հայաստանի երիտասարդությանն է վիճակված վերահիմաստավորել ազգային հոգևոր հարստության անգնահատելի ժառանգությունը և պահպանելով ու զարգացնելով այն՝ փոխանցել եկող սերունդներին:

Սրա հետ մեկտեղ անհրաժեշտ է գիտակցել, որ նորաստեղծ պետությունը դեռևս ի զորու չէ կատարելապես իրականացնելու այն բոլոր սահմանադրական պարտավորությունները, որ ունի ժողովրդի առաջ, թեկուզև մասամբ՝ բավարարելու ժողովրդի արդար սպասումները: Մանավանդ որ պետությունը ստիպված է իր հաստատման ու զարգացման փուլերն անցնել հոգևոր և մետահամակարգային համաշխարհային այս ճգնաժամի պահին, որը չի կարող չազդել նաև Հայաստանի եւ հայ հասարակության վրա:

Այսպիսով Պետությունն այսօր օգնության կարիք ունի, որ նրան մեծապես ունակ է ցույց տալու Հայ Առաքելական եկեղեցին:

> «Եկեղեցին կարեւոր դերակատարություն ունի ժողովրդի հոգեւոր-բարոյական նկարագրի կերտման առումով եւ պետք է պատրաստ լինի իր իրական ամբողջական ծառայությունը բերելու մեր երկրի առօրյա կյանքին, հայրենիքի զորացմանը»
>
> Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց
>
> («Ուղեցույց Ուխտի Ճանապարհին», 2001թ. Սուրբ Էջմիածին)

Մեզանում առկա ճգնաժամի փաստի արձանագրումն ու ընդունումը ակամայից ստիպում են զուգահեռներ անցկացնել Հայաստանում հինգերորդ դարի անցքերի և ներկայիս վիճակի միջև, երբ եկեղեցին՝ ի դեմս Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի, Կորյունի, Եզնիկ Կողբացու, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու և այլոց կարողացավ հաղթահարել նմանօրինակ մի ճգնաժամ և այն էլ պետականության անկման (կամ բացակայության) պայմաններում: Հենց Ոսկեդար անվանված այս շրջանի փորձն է այն հիմքը, որի շնորհիվ հարատևել է հայ ժողովուրդը, պահպանել իր արժեքները և մնացել Քրիստոսի նվիրյալը: Ճգնաժամի հաղթահարումն այն ժամանակ իրականացվեց համոզիչ դասական եղանակով, թեև դա ամենեւին դյուրին չէր: Մեսրոպ Մաշտոցը եկեղեցու (և անձամբ կաթողիկոս Սահակ Պարթևի) հովանավորության ներքո ստեղծեց հայոց գրերը որպես հոգևոր հաղորդակցական մի բարձր համակարգ և այդ հենքի վրա կերտեց յուրօրինակ դպրոց, որը փաստորեն մինչև այժմ գործում է՝ մշտապես առաջնորդվելով. «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» ուխտ-սկզբունքով:

Այսուհանդերձ Հայաստանում առայժմ առկախ և հրատապ է մնում մի հարց. այսօրվա սերունդներում կգտնվե՞ն արդյոք մեսրոպներ-սահակներ, կորյուն-մովսես-կադմոսներ, որոնք ցկյանս համատեղ ուխտ կկնքեն հանուն Մեսրոպ Մաշտոցի պատգամի իրականացման:

Հենց այս ենթատեքստում պետք է դիտարկել Գրասենյակի զարգացումը նրա՝ Համահայկական Երիտասարդական Կառույցի վերաճելու արդի փուլում:

ՈՐՈՆՈՒՄ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Այս փուլը կարելի է սկսված համարել 2000 թվականի օգոստոսի վերջից և բնութագրվում է որպես մի շրջան, երբ նախածեռնող երիտասարդներից կազմված խումբը փնտրում էր Գրասենյակի գաղափարների շուրջ երիտասարդ ուժեր հավաքագրելու եւ պատրաստելու հիմնադրույթային «ոչ ստանդարտ» ճանապարհներ:

2000 թվականի դեկտեմբերի կեսերին արդեն կային նախնական արդյունքներ: Նախ արդեն հայտնի էր և զտված այն աշխատակազմը, որը դարձավ Գրասենյակի միջուկը, եւ որը պետք է առաջատարի առաքելություն ստանձներ Ուխտագնացության ողջ ընթացքում: Երկրորդ, ակնհայտ էր, որ Գրասենյակի բոլոր ծեռնարկները պսակվելու էին հաջողությամբ, քանզի. «Դարձեալ ձեզ ասում եմ. եթէ ձեզնից երկուսը միաբանուեն երկրի վրայ որեւէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կը կատարուի նրանց համար իմ Հօր կողմից, որ երկնքում է. որովհետեւ ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մէջ» (Մատթ. 18:19-20):

Սկսած այդ պահից 2000 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսների «անապատը» հետզհետե նմանվում էր մեղվափեթակի, որում յուրաքանչյուր մասնակից գտնում էր իր տեղն ու ճշտում կոչվածությունը:

ԿՈՒՏԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

(հունվարի սկզբից մինչև մարտի վերջ)

Որոշ կազմակերպչական դադարից հետո՝ հունվարի 5-8-ից սկսվեց կադրերի, տեղեկատվության, վարչական, այլ միջոցների և ուժերի նպատակային կուտակման շրջանը: Գրասենյակում ի հայտ եկան մշտական և ամենօրյա հոգսեր, ինչպես՝ կամավոր-ուխտագնաց երիտասարդների ընդունում, գրանցում, ինտերնետային էջի նախապատրաստում, ձևավորում և պարբերական լրացում. սեմինարների, հանդիպումների, տեսաֆիլմերի դիտումների, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցու աշխատանքներին պարբերական մասնակցության, բարեգործական և շատ այլ ձեռնարկների կազմակերպում, անցկացում: Հիմնական նպատակն էր կամավորական-ուխտագնացների փոխադարձ շփման, հոգևոր հաղորդակցման և համատեղ աշխատանքների մակարդակի բարձրացումը:

Իհարկե, ամեն ինչ չէ, որ անարգել և հարթ էր ընթանում: Նախ քիչ չէին այնպիսիները, որ փորձում էին շահարկել Գրասենյակի գաղափարները և օգտվել երիտասարդների անփորձությունից: Սակայն նման ոտնձգությունները չեզոքացվում էին, իսկ Գրասենյակը առևտրային գործարքների առարկա դարձնելու փորձերը կանխվում: Կարճ ժամանակ անց նման դիտավորություններով Գրասենյակ ոտք դնողները այլևս չէին երևում: Երկրորդ Գրասենյակում որոշ հնարավորությունների խիստ պակասություն էր զգացվում: Մասնավորապես, արդեն մարտի սկզբին չէր բավարարում աշխատանքային տարածքը, թեև ձևավորվող աշխատանքային խմբերը գործում էին նախօրոք հաստատված շաբաթական կարգացուցակով:

Սրա հետ մեկտեղ անսպասելի չափերով կտրուկ աճում էր երիտասարդության ակտիվությունը, որը և պատճառ դարձավ առավել խիստ կարգապահական ռեժիմների կիրառմանը:

Այնպես որ Գրասենյակի ղեկավարությունը՝ իր կազմում 500 կամավորական-ուխտագնաց ունենալու և այդպիսի խմբով Երևան-Էջմիածին ոտքով ուխտագնացության մասին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդին

տրված խոստումը կատարված էր արդեն մարտի 20-ին, թեև ապրիլի 20-ին նախատեսված ուխտագնացությունը հետաձգվեց:

Այս փուլի հաջող իրականացման վկայությունը հանդիսացավ 2001 թվականի մարտի 30-ին ավելի քան 400 երիտասարդ ուխտագնացների հանդիպումը Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի հետ, որից հետո ակներև դարձավ, որ Հայ Առաքելական եկեղեցին Հայաստանում ունի մեծ թվով կայուն հետևորդներ:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

(2001թ. ապրիլից մինչև հունիսի 18-ը)

Այս շրջանը վճռորոշ եղավ այն իմաստով, որ հաստատվեց Գրասենյակի զարգացման անդառնալիությունը, քանի որ գտնված էին արդյունավետ, ստեղծագործ մթնոլորտ ապահովելու ճիշտ միջոցներ:

Մայիսի սկզբներին Գրասենյակում լուծված էր աշխատանքային նոր տարածքի հարցը (ապրիլի 21-ին վարձակալվեց մի տարածք Բուզանդի 1 հասցեով), որը, որոշ վերանորոգումից հետո սկսեց օգտագործվել մայիսի կեսերին: Սակայն բոլոր ուխտավորների միաժամանակյա հավաքների անցկացման համար տարածքային խնդիրը մնաց չլուծված:

Ներկայումս ձևավորված է և միանգամայն կազմակերպված ձևով գործում է Գրասենյակի ավելի քան երկու տասնյակ աշխատանքային խմբերի մեծ մասը:

Ամենակարևոր և էական հաջողություններից հարկ է նշել Գրասենյակի գործերին անշահախնդիր և նվիրված մասնակցություն ցուցաբերող մոտ քառասուն կամավոր-ուխտագնացների առկայությունը, որոնք արդեն դրսևորել են հստակ աշխատելու կարողություն և ներուժ, գրեթե նույնքան, որքան Գրասենյակի հաստիքային աշխատողները, որոնք այս պահին գտնվում են հոգեբանական և ֆիզիկական ծայրահեղ հոգնած վիճակում, քանի որ նրանք ստիպված էին լինում օրեկան 12-15 ժամ անընդմեջ աշխատել: Բավական է նշել, որ մայիսի կեսերից գրասենյակում ամեն օր գրանցվում էր մոտ 20 մարդ:

Այս շրջափուլի ավարտը վեր էր բոլոր սպասելիքներից: Եթե 2000 թվականի սեպտեմբերին Խոր Վիրապ-Էջմիածին երթուղիով ուխտագնացությանը մասնակցում էր ընդամենը 13 ուխտավոր, ապա 2001 թվականի հունիսի 16-17-ը նրանց թիվը հասավ մոտ 300-ի:

Մինչև այժմ իր նախադեպը չունեցող այս Ուխտագնացությունն ավարտվեց Էջմիածնում, որտեղ ուխտագնացներին դիմավորեց եւ իր օրհնության խոսքն ասաց

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրան հաջորդեց 90 կամավորների հավաքական մկրտությունը:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

(հունիսի 19-ից մինչև հուլիսի 6-ը)

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրասենյակին վիճակված էր իր վրա վերցնել ամբողջ միջոցառման կազմակերպումն ու օպերատիվ սպասարկումը, դեռևս նախորդ փուլում մշակված էր ընտրության չափանիշների մի համակարգ, որով Գրասենյակի կամավոր-ուխտագնացները պետք է ստանային Համահայկական Երիտասարդական ուխտագնացությանը մասնակցելու իրավունք: Ընտրվեց երկու խումբ, առաջինը՝ 25-30, երկրորդը՝ 155-160 մարդուց բաղկացած: Առաջինը կազմում էր բացառիկ պատասխանատվության և միջոցառման անմիջական օպերատիվ ղեկավարման մի յուրօրինակ «Աշխատակազմ», իսկ երկրորդը՝ «Պահեստային ապահովման խումբ»:

Հուլիսի առաջին օրերին Գրասենյակի աշխատանքային լարվածությունն ու ծանրաբեռնվածությունը հասան ծայրագույնի, և այս մակարդակով այն պետք է գործեր մոտ երեք շաբաթ՝ մինչև միջոցառման ավարտը:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

(հուլիսի 7-ից մինչև հուլիսի 25-ը)

Առաջին սփյուռքահայ ուխտավորներն սկսեցին ժամանել հուլիսի 7-ին: Սկսվեց լարված օպերատիվ աշխատանքը: «Աշխատակազմի» և «Ապահովման խմբի» շատ կամավորական ուխտագնացների համար սա քսանչորսժամյա աշխատանքային ունիվերսալ ռեժիմ էր, բաղկացած այնպիսի հոգսերից, ինչպիսիք են դիմավորելը, ճանապարհելը, տեղավորելը, ցույց տալը, բացատրելը, կերակրելը, բուժելը, հաշտեցնելը և այլն: Լարվածությունն ու ծանրաբեռնվածությունն սկսեցին քիչ առ քիչ նվազել սկսած հուլիսի 22-ից, երբ արդեն ուխտավորների մեծ մասը մեկնել էր:

Այս փուլի գլխավոր ձեռքբերումը կարելի է համարել հետևյալը. Համահայկական Երիտասարդական Կենտրոնի կազմակերպանը և հիմնադրմանը նվիրված Ֆորումի ժամանակ (2001թ հուլիսի 14-ին) Երիտասարդական

Ուխտագնացության Գրասենյակը, ի դեմս Գրասենյակի պատասխանատու Արեգ Թադևոսյանի և Գրասենյակի քարտուղար Տաթևիկ Մարգարյանի, ընդհանուր գծերով ներկայացրեց իր գործունեությունը և ստացված արդյունքները: Վերջում, երբ հարկ էր որոշել Կենտրոնի ապագա ճակատագիրը, արտասահմանյան պատվիրակություններից մի քանիսի անդամները նշեցին, որ Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակը դրա ստեղծման համար արդեն իսկ պատրաստել է գրեթե բոլոր նախադրյալները: Որից հետո հաջորդ տրամաբանական քայլն է լիազորել Գրասենյակին գործը հասցնելու իր տրամաբանական ավարտին, այսինքն՝ Համահայկական Երիտասարդական Կառույցի կազմակերպմանը ու հիմնադրմանը, քանի որ Կենտրոնի կորիզը ի դեմս Գրասենյակի արդեն կայացած է և հաջողությամբ գործում է:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

(հուլիսի 25-ից մինչև այժմ)

Գրասենյակի ներկայիս վիճակը մի բառակապակցությամբ կարելի է որակել որպես «Վերակազմակերպչական դադար», որը պայմանավորված է չորս հիմնական գործոններով.

<u>Առաջին.</u> Գրասենյակի գործունեության վերակազմակերպումը եւ նոր փուլի աշխատանքների վերսկսումը հնարավոր են միայն Հայ Առաքելական Եկեղեցու կողմից անմիջական ղեկավարման եւ կազմակերպչական լայնամասշտաբ աջակցության դեպքում, ինչը այս պահին խիստ դժվարացել է համընկնելով 1700-ամյակի տոնակատարությունների եզրափակիչ փուլի անցկացման հետ: (Հոգեւորականների Կենտրոնում մնայուն ներկայության խիստ անհրաժեշտությունը քանիցս շեշտվել է բոլոր այն եկեղեցական ժողովներում, որոնց Գրասենյակի աշխատակազմը պատիվ է ունեցել մասնակցելու):

<u>Երկրորդ.</u> Քանի որ Գրասենյակի ուխտավոր կամավորների մեծամասնությունը սովորում են, ապա կապված նոր ուսումնական տարվա սկսվելու հետ՝ ակտիվի եւ նոր կամավորների ներհոսքը Գրասենյակ սպասվում է սեպտեմբեր ամսի կեսերին:

<u>Երրորդ.</u> Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակի հիման վրա Համահայկական Երիտասարդական Կենտրոնի ձեւավորման խնդիրը պահանջում

է մտածողության եւ գործելակերպի նոր մասշտաբներ եւ որակ, ինչպես նաեւ նախորդող փորձի լիակատար ամփոփում եւ նոր աշխատաոճի որդեգրում:

Չորրորդ. Դեռ քննարկման փուլում է գտնվում Կենտրոնի նյութա-տեխնիկական ապահովման եւ կայուն հենքի ստեղծման հարցը: Բնական է, որ Կենտրոնի ծրագրերի եւ մտահղացումների ապահովումը բացառապես Եկեղեցու կողմից, աստիճանաբար կդառնա չափից ավելի ծանրաբեռնող Եկեղեցու եւ անընդունելի Կենտրոնի համար, քանի որ կվերածվի անհասկանալի խնամարկելիության:

Գրասենյակի համար վերոհիշյալ համահայկական կառույցի ձեւավորման ենթատեքստում /չնայած վերը նշված անորոշություններին/ ակնհայտ է հետեւյալը.

Նվազագույն կադրային ռեսուրսները (ի դեմս Երեւանում գրանցված 1400, Հայաստանի թեմերում գրանցված 1000 եւ Սփյուռքի թեմերի մոտ 500 ուխտավոր-կամավորների) հիմնականում առկա են, չնայած ենթակա են որակական բարելավման եւ աճի:

1. Մեկ տարվա գործունեության ընթացքում Հայմահայկական Առաջին Երիտասարդական Ուխտագնացության կազմակերպչական աշխատանքներում ներգարվվածությունը եւ ամենաբազմազան ուղղություններով կրթական եւ ընկերային ձեռնարկների անցկացումը Գրասենյակի աշխատակազմին եւ կամավորական ակտիվին տվեցին այն անհրաժեշտ կազմակերպչական եւ գործնական փորձը, առանց որի անհնար կլիներ մտածել Համահայկական Կենտրոնի ստեղծման մասին:
2. Համահայկական երիտասարդական կառույցի Կենտրոնի (կամ գլխավոր գրասենյակի) գտնվելու վայրը պայմանավորված է Հայկական Առաքելական Եկեղեցու հետ վերջինիս կապվածությամբ և պետք է տեղորոշվի Հայաստան - Արցախ տարածքի սահմաններում:

Ելնելով վերը նշված արմատական որոշման ենթակա չորս խնդիրներից եւ ներկայացված երեք նկատառումներից սկզբունքորեն կարելի է առաջարկել հետեւյալը.

- Փոխել Գրասենյակի կարգավիճակը՝ անմիջականորեն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի ենթակայության տակ անցնելու

ճանապարհով, միանշանակ որոշել հոգևոր հայրերի այն անվանացանկը, ովքեր պետք է մշտապես զբաղվեն և շահագրգիռ լինեն Գրասենյակի աշխատանքներով:

- Մշակել Համահայկական Կենտրոնի ձեւավորման «Համալիր ծրագիր», այն քննարկել եւ մշակել հոկտեմբեր եւ փետրվար ամսներին նշանակված միջթեմական ժողովներում, եւ վերջնական հաստատման դնել 2002 թ. հունիս ամսին ծրագրված Եկեղեցասեր Երիտասարդաց Համահայկական Երիտասարդական Պատգամավորական առաջին ժողովում և ներկայացնել Հայ Առաքելական Եկեղեցու ղեկավարությանը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Հովնան Արք. Տերտերյանի ողջույնի խոսքը՝ ուղղված Երիտասարդական Ուխտագնացության ծրագրի կամավորներին

(Կամավորների առաջին ընդհանրական հավաք, ք. Երեւան, ապրիլ 30, 2001)

Ուզում եմ հոգևոր եղբայրներիս ներկայությամբ իմ ուրախությունը կիսել բոլորիդ հետ, որ այստեղ եմ գտնվում: Դրա պատճառը, կարծում եմ, հստակ է. դա երիտասարդական այն ուխտագնացությունն է, որ մտադիր ենք կազմակերպել 1700-ամյակի տոնակատարության առթիվ՝ այն դարձնելով տոնակատարությունների մեջ ամենից հիմնականը, որովհետև ես անձնապես իմ հոգևոր եղբայրների հետ միասին գիտակցում եմ, որ երիտասարդությունը եկեղեցու սիրտն է: Եթե այն առողջ է՝ եկեղեցին կապրի և կգործի:

Եթե պարզ և ամփոփ կերպով փորձեմ սահմանել, թե ի՞նչ է ուխտագնացությունը՝ մանավանդ քրիստոնյայի կյանքում, կարող եմ ասել, որ այն հոգևոր ճանապարհորդություն է, որը մեզ առաջնորդում է դեպի Աստված, նաև դեպի մարդը՝ մեր նմանը, որպեսզի կատարենք նաև նրա հանդեպ մեր մարդկային պարտավորությունները:

Ո՞րն է երիտասարդական ուխտագնացության հիմնական նպատակը: Հայ երիտասարդի առջև այն կբացի հայ եկեղեցու դռները: Այս ուխտագնացությամբ ուզում ենք Հայ եկեղեցու կյանքում հաստատել մասնահատուկ մի կառույց: Դա հեշտ չի լինի, բավականաչափ աշխատանք, զոհողություն, համբերություն է պահանջվելու. պետք է հասկանանք նաև նրա կարևորությունը: Եթե ուզում ենք, որ Հայաստանյաց Առաքելական եկեղեցին շարունակի մնալ հոգևոր, բարոյական արժեքների ներշնչման աղբյուր, ապա կարիք ունենք մեր եկեղեցու կյանքում հաստատել մի հիմնական կառույց, որ պիտի դառնա հայ երիտասարդությանը մեկ գաղափարի շուրջ միավորող հոգևոր մագնիս:

Ես՝ որպես եկեղեցու սպասավոր, նաև որպես երիտասարդ, դեռ մանկուց, պատանեկությունից հավատացած էի, որ Հայաստանյաց Առաքելական եկեղեցին ինձ համար կյանք է: Այդ կյանքի մեջ մասնավորապես հայաստանաբնակ

եկեղեցասեր երիտասարդների ուսերին է դրված մանավանդ սփյուռքահայ երիտասարդությանը ղեկավարելու բարոյական պարտավորությունը:

Ուզում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը մտածի, թե ինչո՞ւ մասնավորապես Հայաստանում ապրող երիտասարդների ուսերին է դրվում այս դժվարին գործը: Պատճառները դուք ինձանից լավ գիտեք, քանի որ ապրում եք այս հողի վրա, քանի որ դուք լիարժեք կերպով զգում եք հայկականությունը, ձեր հայությանը պատկանելը, և բնականաբար ձեզ է տրվում այդ առաջնորդության իրավունքը, թեև մեր բոլորիս եկեղեցականներիս և ձեր առջև դրված բազում բարդություններ ու փորձություններ կան հայ երիտասարդին այստեղ և հատկապես արտասահմանում եկեղեցու հետ կապելու տեսանկյունից:

Սփյուռքում ապրող մեր երիտասարդության առջև մենք այս առումով շատ արգելքներ ենք տեսնում: Նրանք, ովքեր տարիք և փորձ ունեն, գիտակցում են, որ հայության դիմագիծն այսօր աշխարհում փոխվում է մի շարք պատճառներով՝ խառնամուսնություններով, քաղաքա-ընկերային, մշակութային կյանքի պայմանների բերումով, սակայն նկատում ենք նաև, որ նրանց մեջ մնացել է հայ մնալու զգացողությունն ու ցանկությունը: Ահա այստեղ է, որ մենք պետք է, ձեռք ձեռքի տված, քրիստոնեական սիրով, հավատքով, և նամանավանդ տեսիլքով լրջորեն մեր ուսերի վրա զգանք սփյուռքում ապրող երիտասարդներին հայ պահելու, նրանց կյանքը ոչ միայն Հայաստանյաց Առաքելական եկեղեցուն, այլև մայր հայրենիքին կապելու պարտավորությունը:

Ահա այս նկատառումներով ու մտահոգություններով ես հավատում եմ, որ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու և մեր բովանդակ ժողովրդի կյանքում 1700-ամյակը մի կոչ է ուղղված մեր ժողովրդին, մանավանդ երիտասարդներին, որպեսզի հավատքի գիտակցությամբ բարեկարգենք, զորացնենք, նորոգենք, ամրացնենք հայ Առաքելական եկեղեցու հիմքերը աստվածահաճո այս հաստատության հիմքերը, ինչի համար մեր հայրերը նահատակվել են, դարձել մարտիրոս, սրբացել, իրենց արյամբ պսակել են այս եկեղեցին:

Ինչպե՞ս պետք է հաջողության հասնենք մեր առաքելության մեջ: Բառը պարզ է և հստակ՝ մասնակցություն: Մասնակցությամբ է, որ կարող ենք այս եկեղեցին դարձնել ապրող, գործող ներկայություն, ուղղակիորեն ժողովրդի կյանքի հետ առնչակցություն ունեցող ներկայություն, որը կկարողանա տալ հոգևոր ու բարոյական արժեքների գիտակցություն և դրանով իսկ պսակել մեր կյանքը: Այստեղ ուզում եմ հիշել հանգուցյալ Գարեգին Առաջին կաթողիկոսի այն նշանավոր խոսքը, որն արտասանեց Ավստրիոգրադ քաղաքում՝ աստվածաբանական

պատգամ փոխանցելիս ասաց, որ Աստված ներգործական Աստված է: Եւ եթե Աստված ներգործում է մարդու կյանքի մեջ, ծառայում մարդուն, ապա Աստվածորդու աշխարհ գալով որքան ավելի շատ մարդ է կանչված իրականացնելու նույն առաքելությունը: Մենք ևս մեր կյանքը պետք է վերածենք ներգործական կյանքի: Սա պետք է լինի մեր առաքելությունը և մեր իդեալը:

Սիրելի՛ երիտասարդներ, 1700-ամյակը մեզ համար պետք է մարտահրավեր լինի, և մենք՝ որպես երիտասարդություն, մեզ վրա պետք է վերցնենք մեր հոգևոր, բարոյական արժեքները կյանքի կոչելու սրբազան պարտքը: Մեր հայրենիքը, մեր հողը ճշմարիտ կերպով վերազարթոնք կապրի, եթե էապես փոխվի մեր ժողովրդի կյանքը: Եթե հոգևոր և բարոյական արժեքները խորը արմատներ նետեն, մենք կունենանք նոր սերունդ, կշարունակենք մնալ հայ քրիստոնյա: Հուսով եմ, որ 1700-ամյակը՝ իր հոգևոր զարթոնք խորհրդանշող ներկայությամբ հայ եկեղեցու, երիտասարդության կյանքում պետք է առավելագույնս արժեւորվի:

Մեզ համար սա պետք է լինի այն բացառիկ կառույցը, որ հարատև, քրտնաջան աշխատանքով մեր ձեռքերով պիտի ստեղծենք, պետք է դառնա Հայաստանի և արտերկրի մեր երիտասարդությանը համախմբող, ի մի բերող այն տեղը, ուր յուրաքանչյուր հայորդի իրեն զգա իր տանը:

Կազմակերպել, համախմբել երիտասարդությանը՝ ինձ համար գոնե նշանակում է սիրտ տալ եկեղեցուն, որովհետև ես չեմ կարող պատկերացնել եկեղեցին առանց երիտասարդների: Եկեղեցին իր հերթին չի կարող իր երթը, իր առաքելությունը, իր հոգևոր ճանապարհորդությունը իրականացնել առանց երիտասարդության: Սրա համար է, որ այստեղ ենք: Սակայն իմ նպատակը դա չէ միայն: Ես ձեզ նման մի անձ եմ՝ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու սպասավոր, մեր հոգևոր ժառանգությունը կրող մեկն եմ հայ եկեղեցու կյանքում: Դուք ևս այս ժառանգությունն ստացած հայ եկեղեցու զավակներ եք: Եվ պարտք և պարտականություն ունեք նաև դուք, որպեսզի ձեռք ձեռքի տված վերանորոգենք, շենացնենք այս եկեղեցին:

Այսօր Հայաստանում և արտասահմանում 1700-ամյակի առիթով նոր շարժում է խմորվում, և քանի որ վերջին երկու-երեք տարիների ընթացքում պաշտոնի բերումով այս շարժման մեջ եմ, ուզում եմ ձեզ ասել, որ շատ հաճախ, ինչպես այստեղ, այնպես էլ արտասահմանում, եկեղեցու կյանքի մեջ բացակա է երիտասարդը: Կային ժամանակներ, երբ հուսալքվեցի. Եվրոպայում կամ այլուր մի երիտասարդ չկար, որի հետ խոսեի, որ կարողանայի երիտասարդական շարժում սկսելու կծիկը բացել: Փառք Աստծո, առանց հույսս կտրելու, հավատս Աստծո վրա

դրած՝ շարունակեցի անցնել երկրե երկիր, համայնքից համայնք, թեմից թեմ: Շարժումն հետզհետե սկսեց ծավալվել, մեծանալ, և այսօր արդեն երիտասարդությունը դարձել է շարժուն ներկայություն, մնայուն, ներշնչող, հուսադրող գոյություն:

Երիտասարդությունը կարիք ունի հրավերի և կոչի, կարիք ունի, որպեսզի մենք ձեռք ձեռքի տված մտածենք, գործենք, ծրագրենք և ստեղծենք այն, ինչ ուզում ենք տեսնել, և ոչ թէ հեռանանք:

Խմորվող այս շարժման գագաթնակետը պետք է լինի հուլիսյան ուխտագնացությունը: Չէինք կարող առանց նախապատրաստության հռչակել դրա նպատակը, որոշել տեղը, կանչել, ասել, որ յուրաքանչյուրն այստեղ լինի: Հոգով, մտքով, աղոթքով և ամբողջ էությամբ պետք է պատրաստվենք այս ուխտագնացությանը, որպեսզի, երբ պահը գա, միմյանց հանդիպեն Հայաստանից ու արտասահմանից եկած երիտասարդները, հավատքի լեզվով ճանաչեն և հասկանան միմյանց: Եվ այստեղ է, որ երբ Աստծուն ենք փառաբանում, եկեղեցին առավել զորեղ է դարձնում մեզ: Մենք այս առիթով կոչ և հրավեր ունենք ձեզ, որպեսզի ձեռք ձեռքի, քրիստոնեական հավատքով, համբերությամբ կյանքի կոչենք քրիստոնեության գաղափարը, որը հնարավոր չէ սահմանափակել ժամանակով:

Ուխտագնացություն չի նշանակում ժամանակի մեջ սահմանափակված աղոթքի, հավատքի այցելություն դեպի որոշակի սրբավայր: Ուխտագնացությունը, ինձ համար գոնե, նշանակում է հոգևոր շարժում, քանի որ մենք՝ որպես երիտասարդներ, մեկմեկու հաղորդակից ենք դարձնում աստվածային այն շնորհներին, որ տրված են մեզ: Որպես քրիստոնյա, որպես հայ մարդ իրավունք չունենք կղզիանալ հասարակությունից և ժողովրդից: Մեզ Աստծո կողմից տրված շնորհները պետք է բաժանենք անմնացորդ: Ուխտագնացությունը՝ իր բազում դրսևորումներով պետք է երիտասարդների կյանքի ճառագայթ դառնա:

Ամփոփելով խոսքս, ուզում եմ ասել, թե որոնք պետք է լինեն այն հիմնական կետերը, որոնց պետք է հետևենք Ուխտագնացությունը կազմակերպելիս: Նախ Ուխտագնացությունը պետք է դառնա այն հոգևոր շարժումը, որը կվերակազմակերպի մեր երիտասարդությանը և կվերածի այն հոգևոր, բարոյական ուժի: Երկրորդ հիմնական կետն այն է, որ Ուխտագնացությունը՝ մեր երիտասարդությանը պետք է լցնի գործնական և հիմնական առաքինություններով, ինչով պայմանավորված է մեր երկրի ամրությունը, կայունությունը: Այստեղ ուզում եմ հստակեցնել, որ երբ խոսում ենք ուխտագնացության մասին, խոսում ենք

աղոթքի և հավատքի մասին: Բայց դա ունի նաև իր հույժ կարևոր կողմերը: Յուրաքանչյուր հայ երիտասարդ պետք է հասկանա, որ իր երկիրը կկայանա, եթե գիտակցի իր մասնակցության կարևորությունը երկրի քաղաքական, տնտեսական, ընկերային, հոգևոր կյանքի զարգացմանը: Եվ վերջապես երրորդ նպատակակետը. երիտասարդությունը մեր կյանքում պետք է դառնա նորոգության մղիչ ուժը:

Երիտասարդությունը հայ հոգևորականի համար առաքելություն է: Մեզ մնում է գործել, մեր ձեռքերով կառուցել մեր հոգևոր տունը: Մարդն է, որ կյանք, կենսունակություն է պարգևում երկրին, աշխարհին: Մենք ենք այդ մարդիկ, մեզ է տրված այդ գործը: Ձեր գաղափարների մեջ մնացեք հաստատուն...

Հավելված 2

Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակը

Գրասենյակի հասցեն է.

Քաղաք Երևան, Կորյունի 19Ա
հեռ. (374) 1 56-01-37
ֆաքս/հեռ. (374) 1 58-97-09
էլ. փոստ yp1700@arminco.com
Web Page http:\\www.yp1700.am

Գրասենյակի աշխատակազմն է.

1. Հովնան Արք. Տերտերյան –1700-ամյակի Եկեղեցական հանձնաժողովի վարիչ-քարտուղար
2. Արեգ Թադևոսյան - Գրասենյակի պատասխանատու
3. Կարապետ Բաղալյան – կամավորների հետ աշխատանքի պատասխանատու
4. Տաթևիկ Մարգարյան - գործադիր քարտուղար
5. Հակոբ Նալբանդյան - արտաքին կապերի պատասխանատու
6. Թաթուլ Դավթյան – ֆինանսա-տնտեսական պատասխանատու

Գրասենյակի աշխատանքային խմբեր

- Կամավորների ներգրավման, նրանց՝ Կենտրոնի աշխատանքներին նախապատրաստման խումբ
- Ներքին թեմերի հետ աշխատող խումբ
- Արտաքին թեմերի հետ աշխատող խումբ
- Ծրագրային խումբ
- Տեղեկատվական ծառայություն
- Ամենամյա Մեծ Ուխտագնացությունների կազմակերպման աշխատանքային խումբ
- Ուխտագնաց-երիտասարդների ամենամյա Համահայկական Ֆորումների կազմակերպման աշխատանքային խումբ:

• Հավելված 3

Հայ Եկեղեցու Երիտասարդաց Կազմակերպություն (ՀԵԵԿ)

ՀԵԵԿ Միջազգային Խորհրդի

հիմնադրման առաջարկ

Պատրաստված է 2001 թ. հուլիսի 16

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացնելու համար

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Բարձրաշնորհ Տեր Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանի ղեկավարությամբ, սույնով առաջարկվում է հիմնադրել համապատասխան ժամանակավոր Հանձնախումբ (այսուհետեւ՝ հանձնախումբ), Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն երիտասարդական մարմնի մեկ տարվա մանդատով: Այս փաստաթուղթը ներկայացնում է հանձնախմբին տրվող մանդատը, ըստ որի պետք է նախապատրաստվի պաշտոնական եւ ընտրված ՀԵԵԿ Միջազգային խորհրդի հիմնադրումը, որը կընդգրկի Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր թեմերը:

Խնդիրներ

- Մեծապես ավելացնել Հայ Եկեղեցու Երիտասարդական Կազմակերպությունների անդամների քանակությունը:
- Հայ Եկեղեցու Երիտասարդական Կազմակերպությունների մեջ արթնացնել համաշխարհային առաքելության հստակ գիտակցություն, որը մի կողմից կապված է հոգեւոր կյանքի հետ, իսկ մյուս կողմից իր մեջ ներառում է համաշխարհային բնույթի ծրագրեր եւ նախագծեր:

- Ապահովել հաղորդակցությունը, փոխըմբռնումը եւ հարաբերությունները բոլոր թեմերի միջեւ՝ ներառյալ Հայաստանը:

Ոգեշնչվարական մոտեցում

- Կազմել ՀԵԵԿ Միջազգային խորհուրդ, մեկ տարվա մանդատով, որը հիմք կծառայի հաստատուն, շարունակական միջազգային հիերարխիկ կառույցի Հայ Եկեղեցու Երիտասարդական Կազմակերպության համար:

ՀԵԵԿ ժամանակավոր Հանձնախմբի մանդատը

1. Ղեկավարել, համակարգել եւ կազմակերպել հաղորդակցությունը հայ Առաքելական Եկեղեցու բոլոր թեմերի միջեւ՝ թե Հայաստանում եւ թե արտերկրում:
2. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնությամբ կազմակերպել ՀԵԵԿ Պատգամավորական ժողով: Պատգամավորական ժողովի մասնակիցները (պատվիրակները) կիրավիրվեն ելնելով բնակչության թվաքանակից (համաձայն 1999թ. Եկեղեցական Խորհրդի կողմից կիրառված ընդունված պաշտոնական թվաքանակների):

   Ժողովը կիրականացնի հետեւյալ աշխատանքները.

   - ՀԵԵԿ Միջազգային Խորհրդի կանոնադրության մշակում եւ հաստատում
   - ՀԵԵԿ Միջազգային Խորհրդի մանդատի մշակում, որը կհստակեցնի ընտրված Խորհրդի իրավունքներն ու պարտականությունները
   - Միջազգային Խորհրդի, Թեմական Խորհուրդների, Համագումարների, Սփյուռքի ու Հայաստանի ՀԵԵԿ-ների ստեղծման գործընթացի համակարգում
   - Միջազգային մի կառույցի հիմնադրում, որը կմշակի եւ կիրականացնի որոշակի քաղաքականություն:

3. Ուսումնասիրել Հայաստանի եւ Սփյուռքի բոլոր թեմերի կարիքները. սպասումները, հաջողությունները եւ դժվարությունները հետեւյալ նպատակներով.

ա) Կազմակերպչական աջակցություն ցույց տալ թեմական եւ ծխական մակարդակներում ՀԵԵԿ-ների ստեղծման եւ զարգացման գործին:

բ) Կազմակերպել տեղեկատվության կայուն հոսք տարբեր ՀԵԵԿ-ների եւ Միջազգային Խորհրդի միջեւ:

գ) Համապատասխան մեխանիզմներ ստեղծել թեմերի միջեւ տեղեկատվության փոխանակում ապահովելու համար:

դ) Խրախուսել միջթեմական համագործակցությունը և կազմակերպել մարդկանց, ծրագրերի եւ գաղափարների մշակութային եւ կրոնական փոխանակումներ:

4. Կազմակերպել 2002թ. Երիտասարդական Ուխտագնացությունը.

ա) Ապահովել բոլոր թեմական խորհուրդների եւ թեմական առաջնորդների ակտիվ ներգրավվածությունը եւ մասնակցությունը

բ) Ապահովել բոլոր ՀԵԵԿ-ների ակտիվ մասնակցությունը եւ Երիտասարդական Ուխտագնացության ծրագիրը դարձնել նրանց կարեւորագույն օրակարգային կետերից մեկը

գ) Աշխատանք տանել հայկական ՀԵԵԿ-ների հետ՝ Ուխտագնացության նախապատրաստական աշխատանքներում նրանց ներգրավելու ուղղությամբ:

դ) Որոշել 2002թ. Ուխտագնացության թեման, նպատակները եւ խնդիրները:

5. Փոխակերպել Երիտասարդական Ուխտագնացության Երեւանյան Գրասենյակը ՀԵԵԿ Կենտրոնական Գրասենյակի: Գրասենյակի մանդատը կհաստատվի ՀԵԵԿ Միջազգային Խորհրդի կողմից եւ կապահովի, ինչպես Գրասենյակի արդեն ընթացքի մեջ գտնվող աշխատանքների շարունակելությունը եւ զարգացումը, այնպես էլ կտա նոր մանդատներ եւ հանձնարարականներ, ինչպես օրինակ հաղորդակցության միջոցների հիմնումը (Ինտերնետային էջ, թերթ եւ այլն):

6. Հայթայթել եւ կառավարել ինչպես ՀԵԵԿ Կենտրոնական գրասենյակի, այնպես էլ ՀԵԵԿ Միջազգային Խորհրդի բյուջեն:

ՀԵԵԿ Միջազգային խորհրդի ներկայացուցչական կազմը

2002թ. հուլիսին կայանալիք ՀԵԵԿ Միջազգային Պատգամավորական ժողովի նիստից առաջ (ուր ամբողջ աշխարհից եկած պատվիրակներից կընտրվի ներկայացուցչական Միջազգային Խորհրդի կազմը), Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ, կնշանակի 11 աշխարհիկ անձանցից եւ 3 հոգեւորականներից կազմված ժամանակավոր հանձնախումբ: Հանձնախումբը կկազմվի հետեւյալ համամասնությամբ.

Աշխարհիկ անձինք.

Հարավային Ամերիկա	2
Հյուսիսային Ամերիկա	1
Ռուսաստան	2
Վրաստան, Ուկրաինա եւ Արեւելյան Եվրոպա	1
Եվրոպա	1
Ասիա, Ավստրալիա	1
Հայաստան	3

Հոգեւորականներ (ոչ թեմական առաջնորդներ).

Հարավային Ամերիկա	1
Հայաստան	1
Եվրոպա	1

Գործողությունների ծրագիր- Հուլիս 18-Նոյեմբեր 1

1. Հուլիս 16-20 հանդիպում Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ եւ նրա կողմից ժամանակավոր Հանձնախմբի մանդատի հաստատում,
2. ՀԵԵԿ Միջազգային խորհրդի կանոնադրության մշակում,
3. ՀԵԵԿ միջազգային հաղորդագրությունների, ամսեկան հաշվետվությունների, տարբեր թեմական ՀԵԵԿ-ների զեկույցների եւ այլ տեղեկատվության պատրաստում եւ տարածում,
4. Ուխտագնացության բուկլետի, լուսանկարների եւ վիդեոֆիլմի պատրաստում (Երիտասարդական Ուխտագնացության Գրասենյակ),
5. էլեկտրոնային հաղորդակցության միջոցների մշակում, ներառյալ Ինտերնետային էջ՝ հաղորդագրությունների ուղարկման, շփման, ցանցային ազդարարման եւ այլ հնարավորություններով (ԱՄՆ Արեւմտյան թեմ):
6. Ամբողջ աշխարհից ՀԵԵԿ-ների վերաբերյալ տեղեկատվության հավաքում եւ համակարգում: ՀԵԵԿ չունեցող թեմերում առկա ղեկավարների մասին տեղեկության հավաքում: Այս տեղեկությունների հիման վրա կկազմվի մանրամասն զեկույց, որը ժամանակավոր Հանձնախմբի առաջիկա ժողովին կհանձնվի Ամենայն Հայոց Կաթողիկոսին: